de la Revue arménienne HANTESS
au Couvent des R.R. P.P. Méchitharistes
à VIENNE
VII Mechitharistingasse 4

ԱՐԵՒԵԼԵԱՆ
ԹԱՄՈՒԼ

ԿՐՕՆԱԿՍՏԱՑ

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ եւ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՁԴՊ ՏԱՐԻ

1894

ԹԻՒ 12 ՅՈՒԼԻՍ 1

ԽՄԲԱԳԻՐ - ՏՆՕՐԷՆ
Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ՋՄԻՒՌՆԻԱ
ՏՊԱԳՐ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

	Երես	
Գիտութեան Ծառը	361	ԽՄԲ.
Գիշերային վէպ մը	369	ՎԱՇԱՆ
Իմ Մանկական Յիշատակներս	375	Մ. ՆՈՒՊԱՐԵԱՆ
Աւագ-Սարկաւագութիւն կոյս Հռիփսիմեայ Թայիրեանց	378	Ա. Յ. ԱՅՎԱԶԵԱՆ
Ազգային կեդրոնական վարժարանը	382	ՄՈՏԱ
Կես-կոյսեր	385	Մ. ՆՈՒՊԱՐԵԱՆ
Մեր Գաւառական ժողովը	388	Վ.
Լրաբեր	390	ԽՄԲ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Իմիրի համար տարեկան արժ. մէճ. 3 ½

» » *վեցամսեայ* 2

Ն. Պօլսոյ և այլ երկիրներու համար տարեկ. 4

կամ 17 ֆրանք. վեցամսեայ 2 ½

Ազգ. վարժապետներու համար յիմիր տարեկ. 2 ½

դուրսերու համար » 3

ԿԱՆԽԻԿ ԼՍՈՒԵԼ

Ա. Մասնաւ կ'հրատարակէ նաև յանուագանէք չափաւոր պայմաններով։

Ո և է նամակ, յօդուած ու գրուած ուղղեալ առ խմբագրութիւն ետ չեն դարձուիր։

Այն բաժանորդներն որ կ'փափաքին ուղղակի ընդունիլ իրենց թերթերն կարող են դիմել առ խմբագրութիւնս իրենց հասցէն որոշակի նշանակելով և միանգամայն տարեգլխնն Օսմանեան թղթադրոշմ ուղարկելով։

Մեր հասցէն,

խմբագրութիւն ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՄԼՈՅ — Իզմիր

Rédaction d'ARÉVÉLIAN MAMOUL —Smyrne.

ԼԱ ՖՐԱՆՔՖՕՐԹՈՒԱԶ

(LA FRANCFORTOISE)

ԾՈՎԱՑԻՆ ԱՄԱՆՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՓՐԱՆԿՖՕՐԹԻ

Դրամագլուխ ֆր. 6,250,000 Պահեստի դրամ 1,270,312 ֆր.

Ընկերութիւնս կ'ապահովագրէ շոգենաւով ուղարկելի ամէն տպրանք, ինչպէս և դրամագրայր, ևայլն դիւրամատչելի պայմաններով։

Գնող և այլ ամէն անձերու հանգստութեան համար կը հրաւիրուին դիմել առ ընդհանուր գործակալն Զմիւռնիոյ և շրջակայից Վէյան Ֆէրհանէ,

ՅԱԿՈԲ Գ. ՎԷՄԵԱՆ

Պատիւ ունիմ ծանուցանել Արդյ հասարակութեան թէ ամիչական կերպով կը գործանեմ ակռայի ամէնէ անտանելի ցաւերը։ Ակռաներու փտած մասերը կը լեցնեմ փտութիւնը ինչ վիճակի մէջ որ ալ ըլլայ, չգերուն անդպրութիւն տալու համար մի քանի անգամ միայն գործանելով։ Լցուած ակռան ապագային ոչ պիտի ցաւի, ո՛չ պիտի մաշի և ո՛չ պիտի թափի։

Ա.յն անձինք որ քանիցս կեղծ ակռաներ շինել տուած են և միշտ դժգոհ մնացած, թող հաճին անգամ մը ինձ դիմել և ես պատրաստ եմ մինչև իսկ ՄԱՇԱՆ ու անոնց լինտերու վրայ զետեղել ակռաներու ամբողջ շարեր և կամ անջատ ակռաներ, առանց դիմելու թելերու յոդնեցուցիչ գործածութեան։

Նոր դրութեամբ կը հաստատեմ ակռաներու ամբողջ շարեր անդլիական քաւչուքի վրայ։ Ա.յս դրութեամբ քիմքն իր ՁԱՇԱԿը և լեզուն իր ԱՐՏԱՀԱՆԱԹԵԱՆ ԿՈՎՆ ու ՆԵՐՈՒԹԻՒՆը ՄԻՇՏ կը պահեն։

փտած ակռաներու արմատներն անվնաս կերպով և առանց ցաւ պատճառելու կը հանեմ։

փոփոխութիւն կրնան դիմել Պաամախանէ փողոց, թիւ 120, 8-12 կ. Ա. և 1-7 կ. ե.

ՏԻԳՐԱՆ ՏԻՐԱՅՈՒԵԱՆ

Վ. ՍԻՏԻ — V. SIDI

Մեծ կազմատուն Բարիզեան և Անգլիական ճաշակով։

Ամենաընտիր կազմ, Նաւագատերներու և Տուամարներու

ԽԻՍՏ ԶԱՓԱՒՈՐ ԳԻՆԵՐ

17, Պաղպաղեոտ խան, Ֆրանկաց Թաղ

ԱՆԿԼՕ–ԻՍԹԸՐՆ

ՓՕ–ՕԲԼԻՔԱԹԻՖ ՓՕՄԲԱՆԻ, ԼԻՄԻԹԸՏ

Ցրտկոց ֆոտ

Պատիւ ունինք ծանուցանել թէ՝ սկսած է և կը շարունակուի

ԱՄԱՌՈՒԱՆ ԵՂԱՆԱԿԻՆ

Մեծ ու Շքեղ վաճառահանդէսը որ կը բաղկանայ

Բանալականեներ, բրդեղէնէ և մետաքսեղէնէ, չէրեվէնք, զարդարանքի առարկաներէ, մէկ բառով հագուստեղէնի վերաբերեալ ամէն տեսակ կտաւեղէնէ և վերջապէս

Նորելուկի

Հարուստ ձիւղէ մը

ևՀ ևՀ ևՀ

ՈՐՈՇԵԱԼ ԵՒ ԶԱՓԱՒՈՐ ԳԻՆԵՐ

ՎԱՐԶՈՒԹԻՒՆ

L'UNION

(L'UNION)

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԱՆՈՒԹԻՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀԻ ԴԷՄ ՀԻՄՆԵԱԼ 1828 Ի Ն

Ընկերական Դրամագլուխ և Պահեստի Ֆր. **82,000,000**

Ի ՆՕՕՆ ապահովագրական ընկերութիւնս նկատելով որ Անգլ. ընկերութիւնները իրենց արդի սակագինէն 30էն 50 ο/ο զեղչ մը կ'ընեն, պատիւ ունի ծանուցանելու իւր բազմահին յաճախորդներուն և արդի հասարակութեան թէ պատրաստ է շնորհել յատկացուածական 20 ο/ο զեղչ մը այն գումարին վրայ զոր Անգլ. ընկերութիւնները կ'առանձն իրենց սովորական 30 ο/ο զեղչը ընելէ յետոյ։

ԺԱՆ Բ ՊՕՍԿՕՎԻՉ
JEAN P. BOSCOWICH

Ը. Եղեռնուր Գործակալ Ջմիւռնիոյ

ԿԻՍԱՄՄԵԱՅ

ԽԳ. ՏԱՐԻ

ԹԻՒ 12 1 ՅՈՒԼԻՒՍ 1894

ԳԻՏՈՒԹԵԱՆ ՄԱՌԸ

Ինչպէս բարեկիրթ՝ նոյնպէս անկիրթ ժողովուրդները մանկտին կրթելու եղանակ մ՚ունին որ կ՚յարմարի իրենց միջավայրի պայմաններուն. Ա. յս եղանակը կրնայ լինիլ գիտական կամ աւանդական, սակայն երկուքին նպատակը մի և նոյն է, այս է ստեղծել սերունդ մ՚որ համակերպի տիրական բարուց, շահուց, սովորութեանց և դանազան աւանդութեանց և գործօն կամ կրաւորական դեր մը կատարէ իր գտնուած ընկերական կամ նահապետական միճակին մէջ. Դաստիարակութիւնը, տեսարաններու ամեն գեղեցիկ և համայնական սկզբանց հակառակ, պըտուղ մ՚է որ ամեն հողի վրայ, ամեն կլիմայի տակ մի և նոյն համն ու հոտը չկրնար ունենալ, մի և նոյն դոյնն ու

ձևը չկրնար ստանալ, ինչպէս ամեն տունկ չկրնար բուսնիլ, աճիլ ու արդիւնաւորել այն երկրի վրայ որ զուրկ է այդ արդիւնքն արտադրելու տարրներէ։ Ընչաչտ արհեստական միջոցները կարող են բռնադատել հող մը յառաջ բերել ինչ որ իրեն յատուկ չէ, սակայն անբնական ճգանց բերքն անյարատև և միշտ բացառիկ կ'մընան։ Յապէս լեռնային, դաշտային, ծովային ժողովուրդները կրթել, ինչպէս կ'կրթուին՝ դաստիարակութեան նոր տեսութեանց համաձայն, վարժարաններու և համալսարաններու մէջ կարդ մը քաղաքակիրթ կոչուած ազգերու սերունդն, ուրիշ բան չէ այլ չնչել, սպաննել այդ լեռի, դաշտի ու ծովու զաւակներն, որ ունին մաքառիլ բնութեան այլ և այլ յեղակարծ արկածից դէմ, և հետևապէս և կանխաւ վարժիլ այն մարմնական չարքաշութեան, տոկունութեան և հոգեկան արիութեան որով հնար է միայն դիմադրաւել ցամաքային ու ծովային փոթորիկներու։

Եթէ այսպէս կրթութեան ընթացքը կ'ղանազանի երկրային մեծ բաժանումներու նկատմամբ, ոչ նուազ ըզգալի տարբերութիւններ կ'ընծայէ մեզ հեռաւոր աշխարհներու այլ և դրացի ազգերու մէջ։ Բաւական է բաղդատական ակնարկ մը նետել Անգլիոյ, Ֆրանսայի, Բրուսիոյ և Ռուսիոյ ընտանեկան, քաղաքային և ընկերական բարուց վրայ, համոզուելու համար՝ որ անուանի մանկավարժներու իմաստասիրական հմտութիւն մեթոտներուն ընդհանուր դծերն ընդունելով միայն և տոհմային հանգամանաց յարմարցնելով, մէն մի ժողովուրդ յատուկ ուղղութիւն մ'ընտրած է կրթութեան նկատմամբ՝ որու վրայ կ'ազդեն տեղային նախապաշարմունք, օրէնք, սովորութիւններ, ինչպէս նաև կրօնական ու պաշտօնական նկատումներ։ Միօրինակ կրթութեան հիմ մը աշխարհի ամեն ազգերու համար անկարելի, որ տարբեր բնաւորութեանց, հիմնարկութեանց և պիտոյից ենթակայ են, այնքան անհնթեթ և անիրանալի կ'թուի որքան անհրնար է միօրինակ պտղաբերութիւն երկրի իւր բնական

այլազան կազմակերպութեան մէջ։ Ըստ այն կրթական, ընկերային և ընտանեկան խնդիրներն որ մերթ ընդ մերթ կ'յուզուին Եւրոպա, մեզ արևելցւոց համար այնքան օտարոտի կ'թուին որքան Աւրեցեալ գօսուին բնակիչներուն համար ձիւնն ու սառն։ Եւ սակայն այդ կարգէ խնդիրներ մամլոյ միջոցաւ մեր ականջին կ'հասնին, մեր ուշադրութիւնը կ'գրաւեն և երբեմն ծիծաղը կ'շարժեն՝ նման բարբարիկ Պօշմանի ծիծաղին, որով կ'բռնուէր երբ եւրոպացի ուղեւորն անոր Ասատուծոյ գաղափարը կ'ջանար տալ։

* * *

Եւ ահա այս օրերս անգլիական թերթ մը (Նը հանդէս) ըստ նոր սովորութեան մամլոյ, խնդիր մը կ'նետէ մէջ տեղ, նշանաւոր հեղինակներու կարծիքը խնդրելով, և այդ խնդիրն է թէ՝ արդեօք պէ՞տք է թէ ոչ մանկտին և մասնաւորապէս աղջկունքը տգիտութեան մէջ պահել կենաց պայմաններու վրայ։ Աւելի պարզ խօսելով՝ հարկ է թէ ոչ Գէորգեան ձառէն պատուղն, ամուսնական վիճակին ի՞նչ է անոնց բացատրել։

Մեզ կ'երևի թէ բաւական վտանգաւոր է այս հարցն՝ որ եթէ ոչ լուծում մը դտնելու, գէթ մի քանի լրագրական էջեր ընելու մտօք լման է հրապարակը։ Եւ արդէն յայտնի է թէ՝ ինչ որ գեղեցիկ սեռին կ'պատկանի, ինչ որ իրեն պէս՝ խորհրդաւոր հրապոյր և գոյն կ'կրէ, իւր կոյն ընթերցողներու եթէ ոչ սիրտը, միտքը կ'գրգռէ և սիրային նոր գիւտ մ'իմանալու հետաքրքրութեամբ կը բորբոքէ։ Բայց արի տես, որ ոչ նոր հրապոյր ունի այդ հարցն և ոչ վտանգելի գիւտ մ'է կ'բերէ մեզ, այլ շատ շատ գրելու նիւթ մը։

Եւ իրօք՝ թէ կանանց և թէ արանց կարդէն այլ այլ անուանի գրողներ վարդապետական ձանրութեամբ մը կ'յայտարարեն իրենց կարծիքն այս մասին և գրեթէ ամեն.քը կ'փափաքին որ աղջիկ մը աստիճանաբար իր մօր կամ յատուկ ուսուցիչներու միջոցաւ, սորվի իր մարմ-

նոյն բնախօսական դործողութիւններն, սերման գաղտնիքը, ամուսնական կացութեան պահանջումներն, սորվի ընտրել ապագայ ամուսինն, կանխաւ տեղեկանայ անոր երիտասարդական արարմանց, այնպէս որ քաջառողջ ու կորովի պտուղներ բերէ։ Համառօտ՝ այդ խնամտութիւնները կ'պնդեն թէ աղջիկ մը պարտի սեռական և ծննդական յարաբերութեանց բնութեան վրայ լիուլի տեղեկութիւններ ունենայ, վասն զի, կ'ըսեն, վիպական, իտէական միտումները, և մանաւանդ տգիտութիւնն՝ անմեղութեան քօղով, մեծ վտանգներու կրնան տանիլ աչխարհի բաներուն անզգուշակ, անփորձ արարած մը։

* * *

Ոչ այնքան խնդիրն որքան խնդրարկուն, անգլիացի մը, մեր զրմանքը կ'դրդռէ։ Արդարև՝ իրապաշտ Եւրոպան ընդհանրապէս հետամուտ է ժամանակէ մ'ի վեր՝ աւելցնել, պղտորել մարդկային հէք կենցաղին դառնութեանց ոխոխումի բերող խորհուրդ, իտէալ, պատրանք, այդ կենայ ամենէ վատ ու յոռի կողմերն պարզել, և ինչ որ ակնածելի ու նուիրական է դրչի ծայրով պղծել, սակայն յուսալի չէր որ ընտանեկան սրբավայրի պաշտպան հանդիսացող հպարկչն ազգի մը թերթն, ազգի մ'որու կառավարութիւնն՝ մի քանի տարի առաջ՝ Զօլայի վէպերէն թարգմանող հրատարակիչ մը բանտարկութեամբ պատժեց, երկնէ հարց մը հրապարակ հանէ, որ կուսական քօղն կ'բառնայ և աղջկունքն ամուսնական դաղտնեաց հետամուտ ընելու կարևորութիւնը բացատրած քարոզէ։ Այդ հրապարակային քարոզն՝ առաջաստի խորհրդին վրայ, բիւրաւոր աղջկունք կարդացած, և անշուշտ չատեր ժպտելով ըսած են. — Քանի՛ անամօթ են մարդիկ, մինչև իսկ կիներ. դոնէ նոր դաս մը տային մեզ։ Ինչ հարկ վողով կրկնել, ինչ որ մենք գաղտնի աւելցնէ դիտենք։— Եւ՝ ըստ մեզ՝ իրաւունք ունէին, վասն զի կան բաներ որ կ'խօսուին այլ չեն հրատարակուին կան նաև բաներ որ յատուկ դրեանց մէջ կ'անց-

նին՝ իբրև ուսուցիչ ազատութեան առաքեալներ հասուն անձերու դիտութեան համար, այլ ոչ օրական թերթերու մէջ՝ որ ամեն կարդի և հասակի անձերու մէջ կ'չբըջաբերին, վասն զի բնախօսական երևոյթներու չափ, որ մարդկային կամքէն առկախ կ'գործեն, կան նաև այլայլական և զգայնական երևոյթներ որ արբնութեան մէջ երևան կ'ելնեն, մարմնոյ, մտքի և սրտի մէջ նորաչնան չջլուածներ կ'բերեն և նոր զգալի փոփոխուածներ կ'պարզեն աչաց առջև, բաց ասոնք՝ արտաքին բնութիւնն, օրրատակցական զրոյցներ, վիպասանական նկարագիրներ անդադար կ'խօսին արբուն աղջկան բանականութեան, երևակայութեան և զգայարանաց, և այդ ներքին ու արտաքին տպաւորութեանց չնորհիւ յառաջ եկած ձրկատուածներուն լաւ ուղղութիւն մը տալու գործն՝ ոչ թէ մանաւոր ուսուցչի մ'որ Ցօքտօր Բանկլօսի դերը կրնայ կատարել՝ երբ մանաւանդ աչխոյժ և սիրուն երիտասարդի մը դէմքով կ'ներկայի, այդ գործը, կ'ըսեն, միայն ծնողական հսկողութեան, մտերմական հրահանգներու և ընտիր դաստիարակութեան կ'պատկանի։

Ա յս ամեն բնական և դասական իրողութիւնները կը պատրաստեն օրիորդ մ'որ ապուշ չէ, կշռել իր էութիւնն ու կացութիւնն, ամուսի և ամուսնական կենաց այլ և այլ պայմաններու հնտանալ, կուսական համեստութեան հետ անմեղ զգացմանց դրոշմ անվթար պահել և իր չինած մտատիպարին ճարակ տալ այն ամեն մտայինն, բարոյական և հոգևկան վայելուչներով որոց ազբիւրը կ'գտնուի դրական, արուեստագիտական և գեղեցկագիտական ընտիր ներշնչութեանց մէջ։ Ա յս ամեն գովելի հանգամանօք օժտեալ օրիորդ մը բազդաւոր պիտի համարուէր՝ եթէ իր մարմնոյն և հոգւոյն համապատասխան վիճակ մ'ընտրելով կարենար հասնիլ այն նպատակին որ ամուսնական երջանկութիւն կ'կոչուի։ Ցաւալին այս է, որ մարդիկը և իրերը քաջ ճանչող օրիորդներ ատեպ ընկերային անշահ պատչաճութեանց, ծնողական չահամոլութեան, ընտանեկան փառամոլութեան զոհ կը

լինին՝ բռնի ամուսնութեամբ իրենց իսկականը թաղելով, քան թէ անձնական ունայնասիրութեան և տպաւորութեան պատճառաւ. երբ իրենց երազած գահէն վար իջնելու կ'ստիպուին՝ անկարդ ու խառնակ կենցաղավարութեան մէջ իրենց վիշտերուն մոռացում՝ ափսոփում կ'վնտռեն, եւ թող լուսամիտ դաստիարակներ չդատապարտեն՝ իրրև վտանգաւոր կանացի պատուոյն, այն նահապետական պարզ կենցաղն որու մէջ շատ ազնիւ կոյսեր՝ մեր արեւելեան աշխարհի մէջ, անմեղ և անդորր կեանք մը կ'անցնեն հեռի կրից փոթորիկներէն որ շատ անգամ ամենէ անարատ հոգին կ'փշրեն, հոգւոյսեր մօր մը թեւին ներքև, այնպէս որ երբ ամուսնութեան ժամն հնչէ, չէ թէ իրրև ողջակէզ կամ բազմադէտ սադան մը, այլ պարզութեան, սիրոյ և հաւատարմութեան պակով զարդարուն՝ խորհրդաւոր էակներ, կ'մտնեն այն տունն որ ամուսնական կենցաղ կոչանը պիտի լինին։

Թերևս առարկի որ կանանց ազատագրութեան հետամուտ շրջաններու մէջ՝ կինը պարտի լինիլ մարդուն չափ արթուն, խորագէտ, բանիրուն, և իրական աշխարհի ամեն դարձուածոյ իրաշեկ, որպէս զի ի հարկին մրցի իր ընտանւոյն դէմ՝ որ է միշտ մարդը՝ ամեն պաշտօնի՝ մինչև իսկ պատանեկան մոլորութեանց ասպարեզին մէջ։ վասն զի սեռական խտրութիւններ և աստի ծագած հետևանքն հետզհետէ պիտի բարձրին, կուսութեան նախապաշարումներ, նոր բժշկական դպրոցի մը բնախօսական հետազօտութեանց համեմատ՝ պիտի չնջուին, և երբ այր ու կին դէմ առ դէմ գալով մաքառին իրաւանք և պարտիք իրենց մէջ հաւասարապէս բաժնելու պիտի յաջողին։

Ըրդ՝ եթէ կինն այս յաջողութեան ճամբուն մէջ է յԵւրոպա, եթէ ընտանեկան շրջանէն հեռի, իրական աշխարհի ամեն կրից հետ չվուելու սահմանուած է, եթէ, հետևապէս, ոչ միայն իր այլ մարդուն բնախօսական և ղգայական դրութեան հմուտ է՝ դեռևս ամուսնական՝ սահմանը չմտած, եթէ՝ վերջապէս՝ միամիտ և անգէտ

Իւանեըուն գարն անցած է և ամեն օրիորդ Գնդապետեան ծառին պտուղին քիչ շատ ճաշակն առած է, ի՞նչ հարկ քարոզներ կարդալ և անոր կարծեցեալ տգիտութենէ յառաջ գալիք անպատեհութիւնները նշանակել։ Դըժբաղդաբար՝ Եւրոպացի կինն՝ կուսասատանէն դուրս, շատ աւելի գիտէ այժմ քան ինչ որ պետք է, և անհամեմատ աւելի լուսամիտ, աւելի փորձ, աւելի իրապաշտ կ'երևի քան իր արևելցի քոյրն, որ պակայն իր համեստ, անշուք և քիչ շատ տգիտական սահմանին մէջ՝ առ հասարակ, այնքան յանդգնութեան, այնքան անհաւատարմութեան, այնքան գայթակղելի գործերու օրինակ չհանդիսանար որքան արևմտեանն։

* * *

Եւ պատճա՞ռն. վասն զի մեր կողմերը կինն իր նախնական պարզութիւնն ու կնային յատկութիւնները պահած է՝ չարժելով ու գործելով աւելի ընտանեկան շրջանի մէջ՝ քան հրապարակի վրայ՝ որ շատերուն փորձութեան դարան մը կրնայ լինիլ։ Բայց ասոի՝ ինչպես մօտերս մեծանուն Մաքս-Միւլէր ուշագրաւ յօդուածի մը մէջ կ'դրէր, Արևելքի մէջ համեստութեան զգացումն և ընտանեկան պատուոյ գաղափարն դեռ ևս աւելի շատ ոյժ ունի, ապօրէն բազմակնութեան և չնութեան դէպքեր աւելի հազուագէպ են և հաւատարմութիւնն իրրև բարոյական մեծ պարտաւորութիւն կ'նկատուի, քան թէ Արևմուտք՝ ուր թէև ամուսնութիւնն եկեղեցւոյ խորհուրդ մ'է, ըստ կրօնական օրինաց, բայց անխորհուրդ սիրային կապակցութեանց սահմանն այնքան ընդարձակ է և չպարուն ազատանութեան մոլորանքն այնքան սովորական, որ կարելի է ըսել, թէ բազմայրութիւնն և բազմակնութիւնն բարեկիրթ համարուած ընկերութեանց բարուց մէջ լռելեայն կ'տիրեն իրրև անդամանելի չարիք, և քաղաքային օրինաց առջև դատելի և դատապարտելի չեն։ Եւ սակայն այսպիսի բարուց են-թակայ ժողովրդոց պատիները չեն կրնար դառնութի

պէս անմեղ և ոգեկոչ ծնող, այլ անոտարակոյս չափահաս չեղած իսկ ուսած են կնոջ պարտականութիւնները, որոց մէջ մտնելու մարմնով կ'տառապին։ Ուրեմն՝ եթէ կայ վըտանգ մը, այդ վտանգն կընայ ծագիլ կանխահաս արդնութենէ ու դիւրազգացութենէ, և անշահ ծնողաց անպատիառ խօսակցութենէն և յարաբերութեանց տեսակէն, որ միշտ օրինակելի չէ։ Ամէն ծանր և անարդարանալի է գիտութեամբ քան չգիտութեամբ դործուած յանցանք մը։ Այս վերջինն հազուագէպ և երբեմն անխուսելի պարագայից արդիւնքն է։ Անոտարակոյս արևելեան աղջկունք անկրիպելի չեն, անշուշտ կարող են մոլորիլ տգիտութենէն, և մեր նպատակն կուսական տգիտութիւնը պաշտպանել չէ, այլ միայն դիտել տալ որ ըստ ցաւակունք այժմ առկայ դրութեան մէջ կ'գտնուին, դրութիւն՝ որուն վատ ներգործութիւնն հետզհետէ կ'սպրդի և մեր կողմերն, քան թէ խօսքէ որդիք, որ դոնէ կրօնական դաստիարակութեան, ընտանեկան պարկեշտութեան և կուսական անարատութեան զգացման բերմամբ գիտեն առհասարակ անեղծ պահել ինչ որ իրենց սեռական անբռնաբարելի դանձն է։ Եւ եթէ եւրոպացի օրիորդներուն պէս մերիններն գիտական և բնախօսական երևոյթներուն վրայ երկար դիտական դասեր չեն ընդունիր, եթէ բնական յուզմանց և չարժումներուն վրայ նուրբ հրահանգներ չեն լսեր մեծ խմաստուսուցիչներուն բերնով, դոնէ ունին ընտանի դաստիարակուհիներ՝ իրենց խմաստուն մայրերուն դէմքով, որ անձնական փորձառութեամբ և գորովալի խնամօք՝ ընտանեկան յարկին ներքեւ գիտեն անոնց՝ գաղանապահութեան կնքով՝ հաղորդել ժամանակին Գիւրիեան ծաղկին վրայ այն ամեն ծանութիւնները որ պիտանի են օրիորդի մը համար իմանալ, երբ ընութիւնն իր այլազան նշաններով արդէն կ'խօսի իրենց սրտին ու երևակայութեան։

ԳԻՇԵՐԱՅԻՆ ՎԷՊ ՄԸ՝

Երբ Հանրի մէկ կողմէ կ'զարմանար նէրա անկեղծ և լուրջ ներպարանին վրայ և միւս կողմէ կ'ապշէր կ'ընար տեսնելով որ կ'խոլատարէր նէ պինքն գրկելու, յանկարծ ահարեկ ընկրկեց՝ ներա աչերն ի մտուտա դիտելով։ Հրաշեա ածուխներու նման կ'փալփլէին անոնք, և կարծես թէ ներքին բոցով մը կ'ընդլայնէին։ Արտահայտութիւնը անշարժ. ակնարկը անքթիթ, հասակը ձիգ, ձեռները սրունքին վրայ բոլորած, եղերական անշարժութիւն մը չրչապատած էր անոր չքնաղ դէմքը։ Հանրի սարսռաց, նախազգացում մը պինքը գրաւեց։

— Ի՞նչ ունիք, ըսաւ նա, ի՞նչու այսպէս կ'նայիք ինձ։

— Ոչինչ . . . բան մը չունիմ, մտմտաց նէ հեռաւոր և խուլ ձայնով մը, գլուխը անոր ուսին վրայ յենլով, մինչ իւր զարհուրելի աչերը անհունութիւնը կ'լափէին։

Հանրի երկու ձեռացը մէջ առաւ ներա ճակատը ուշի ուշով տեսնելու համար անոր բոցավառ բիրերը, ուր հանդարտ լուսինը իր աղօտ լոյսը կ'ցոլացնէր։ Այն ատեն Հանրի՝ այն հառաչները, այն խուլ ձայնը, այն վատոյժ ձեռները, այն քնոյ և երազի դիրքը, ամէն բան ըմբռնեց։ Այս պաշտելի էակը, զոր ընդ գրկեր էր, ի քո՛ւն էր անզգայ և անգիտակ . . . ։

— Այսպէս ուրեմն, ըսաւ նա, չէ՞ք յիշեր որ այս առտու գիս ձեր հօր տունը տեսաք։

— Ո՛չ։

— Ո՞չ, իսկ միւս օր նախագահին տունը։

— Ո՛չ։

Այլ ևս տարակոյս չկար։ Նէ չէր յիշեր ոչ ցորեկը՝ դիէրային տեսակցութիւնը, ոչ ալ գիշերը՝ ցորեկի դէպքերը։ Նէ անկնդծ էր թէ ցորեկը պինքը մերժելուն՝ և թէ գիշերը պինքն սիրելուն մէջ։

Հանրի ոտք ելաւ. մինակ մնալու պէտք ունէր։

— Չարկ է տուն դառնալ, ըսաւ նա, ծնողքդ կրնան ձեր բացակայութիւնը նշմարել։

— Պիտի վերադառնա՞ք վաղն, յարեց նէ ցած, շատ մեղմ ձայնով և հրեշտակային ժպիտով մը։

— Այո՛։

Նէ մատներուն ծայրով մէկ կողմ ըրաւ ճակտին երկու կողմէն դէմքը ծածկող մազերը և պահ մը Հանրին աքանչանօք դիտելէ վերջ՝ մեկնեցաւ առանց շուռ գալու, ձեռօք անոր բա-

---

Տե՛ս 11 թիւ։

բևեռով։ Հանրի դիտեց որ Նէ կայերու նման գլուխը բարձր կ'բռնէր։

Զգահար և յուզիալ նա սկսաւ լուանալ լուսով մարգերուն մէջ չրջագայիլ։ Միրուիլ պիչերաչրջիկ օրիորդ է մը . . . ։

Ցնորք մ'էր այս . . . ։ Այս սիրավառ բերանը, այս երկար ան ընքուհները, այս չքնաղ կոյսը, այս ամէնը երա՞զ էին . . . ։ Ուրուական մը կ'դրկէր ինք, մեռեալ մ'որ կենաց երևոյթը միայն ուներ։ Նէ ի քուն միայն կինքը կ'սիրէր, արթնութեան մէջ դինքը չէր ճանաչեր . . . ։ Ներա ոչ սիրտը, ոչ խիղճը ու ոչ միտքը, ներա իրական Նէն ոչինչ գրաւած էր ինք։ Պղծութիւն չէ՞ր մինչ հրապուրել աղջիկ մը որ իր անձին տէրը չէր։ Երկու մինչ կար իրեն համար, կամ ծնողացը իմաց տալ և կամ միւս օր ցերեկը խօսիլ, յայտնել ներա իր սէրը, իր խըղճահարութիւնները, և ցորեկը սիրուիլ անորմէ, քանի որ գիշերուանը միայն ցնորք մ'էր . . . ։

Միւս առաւօտ անկողնոյն մէջ արմկին վրայ յենլով գեղատի աղջիկը նորէն զգաց այն մարմնական թուլութիւնը և բարոյական նեղութիւնը, որ չարաթէ մ'իվեր դինքն անհանգիստ կ'ընէին։ Ամեն առտու՝ գիշերը գեղեցիկ երիտասարդ մը հետ խօսակցած ըլլալու տարտամ յիշատակով մը կ'զարթնուր, երիտասարդ մ'որ կինքը կ'պաչտէր քա՛զգր առանձին տեսութիւններ, որոց յափշտակութիւնը ցորեկն ալ կ'տևէր, իր միտքը կ'խառնվէր և իր սիրտը կ'գրաւէր, առանց սակայն իր երևակայութեամբ այս կնճիռը լուծել և տեսարանը իր աչաց առջև կրկին բերել կարենալու։ Ոեթ օրէ ի վեր սիրայոյզ բանդագուշանաց մէջ կ'ապրէր։ Այս վիճակին մէջ օր մը պատուհանէն Հանրին տեսած էր, որ տան դիմացը երկու պարոններու հետ կ'խօսէր։ Երիտասարդը անոնց իւրաքանչիւրին ձեռները սեղմած և ժպտելով և խօսելով հանդերձ ակնարկը իր պատուհանէն չէր հեռացընէր։ Սարսուռ մը ներա ամրողջ մարմինը չարժեց։

Այն վայրկեանէն իր անհանգստութիւնը աւելցաւ։ ժամերով առանց բերանը բանալու կ'սեղնագործէր։ Երեմն կ'ծոզուր ասեղն մտիկ ընելու համար հովին սուլումն և թռչնոց ճռուողումը և իր երկու բազուկները ձեռագործին վրայ թոյլ կ'իյնային՝ երբ կ'խորհէր այն երիտասարդին վրայ որ իր պատուհանին նայած էր։ Ջանաց մոռնալու, գբօսնելու, բայց տեսիլը կինքը հալածել սկսած էր։ Հանրիի ցերեկի այցելութիւնը իր յուզմունքն վերջին ծայր գրգռեց։ Լաւ չէր ըմբռնած ինչ որ նա ըսած էր, բայց ինք մոլեգին հետևեցաւ։

«Ով է ինք . . . ի՞նչ կուզէ ինձմէ . . . ։» Կ'ըսէր ինքնիրեն և այլ միջոցին չէր կարող զսպել իր յուզեալ, անհանգարտ միտքը որ կ'քրքրէին չարունակ այն սիրական տեսիլները, այն այնքան քաղցր և անբացատրելի երա ները։ Ամեն գիշեր իր սենեակը լաւ մը գոցելէ վերջ, քնացած պահուն՝ կ'երևակայէր

թէ պարտիզին մէջ, դալարեաց տակ լուսնի գեղեցիկ լուսով, Հանրիի նամանոյշ անծանօթի մը բակին կրթնած սոխակներու դայլայիլը կ'լսէր։ Հեչտութեամբ և երկիւղով կ'սարսռէր, բայց իւր կամքէն վեհագոյն բան մը, քնոյ այս խորհրդաւոր խանդը, կ'տանէր դինք իրօք և գաղտնի Հանրիի բակացը մէջ, մինչև որ վերջապէս զնէ մօտէն դիտելով երիտասարդը ամեն բան գուշակած էր։

Միւս օր դեռատի աղջիկը իր արտմութիւնը և տեսիլները վանելու համար պահ մը պարտիզին մէջ զով օդով չրջագայելու ելած էր։ Յուզմամբ մազ մնաց սիրտ մարէր՝ երբ Հանրին տեսաւ ծառերու տակ, որ չիտակ իր մօտ եկաւ, բարևեց և գլխարկը ձեռքը բռնած, «Օրիորդ, ըսաւ, բառ մը միայն ունիմ ձեզ ըսելու, բայց ծարկ է որ ինձ մտիկ ընէք։»

Լուիզ հպարտութեամբ անոր նայեցաւ։ «Պէտք չունիմ ձեզ մտիկ ընելու, ըսաւ նէ, ձեզ չեմ ճանչեր . . . : Նախ և առաջ ձեր տունը չէք գտնուիր հոս, պարո՛ն . . . :»

Հանրի անխռով և քաղցրութիւնամբ չարայարեց,

«Այո՛, դիս կ'ճանչնաք, բայց չէք յիշեր . . . : Մեր տեսակցութեանց վրայ չատ չիսթ և տարտամ յիշատակ մ'ունիք։ Բառ մը ձեզ ամեն բան պիտի բացատրէ։ Անհեթեթ անհաւատալի է, բայց ճշմարտութիւնն է այս, կ'երդնում ձեզ։ Գիշերը ի քուն կ'ելնէք և կ'գաք ձեր պարտիզին մէջ դիս գտնելու . . . : Պէտք է ղայս ձեզ ըսեմ իմ ընթացքս բացատրելու համար, որպէսզի գիտնաք թէ ինչո՞ւ համար ձեզ կ'նայիմ միշտ, ինչո՞ւ համար ձեզ կ'փնտռեմ, և ինչո՞ւ համար կ'սիրեմ ձեզ այնպիսի խորին, վշտահար սիրով մ'որ գիս կ'յուսահատեցնէ և կ'սպանէ . . . :»

Լուիզ բոլոր մարմնով կ'դողդողար։ պահ մ'անոր նայեցաւ առանց բան մ'ըսելու, ապա իւր յուզմունքը զսպելու համար բուռն ծիլ մ'ընելով չղային ծիծաղով մը,

— Խենդեցեր էք դուք, իրօք, ըսաւ։

— Ոչ, չեմ խենդեցած. ճշմարտութիւնն է որ ձեզ կ'խօսիմ։

— Լաւ ուրեմն, երբ մէկը ի քուն է զայն կ'արթնցնեն։

— Կուզէ՞ք . . . :

Լուիզ իր հասակին բոլոր բարձրութեամբն անոր առջև կանգնեցաւ, վհատութեամբ գլուխը տնկեց որպէս թէ զանի յաղթահարէ և վանկերը մի առ մի չեչտելով՝ վերջին հեգնալի ծիծաղով մը, «Այո՛, պարո՛ն, ըսաւ, ինձ հաճոյք պիտի պատճառէք։»

Ի քո՞ւն . . . այսինքն գիշերաչրջիկ . . . : Բայց ոչ, անկարելի էր այս, նա կ'սեպէր Յանկարծ իւր մեծ մեր յիշատակը Լուիզի միտքը ընկաւ. մայրը յաճախ պատմած էր անոր այս տեսակ մի քանի դէպքեր որ ամուսնութենէ առաջ և նոյն իսկ ամուսնութենէն վերջ ժամանակ մը տեսած էին։ Արդեօք ինքն ալ մեծ մ'ըր պէս եղած էր . . . : Լուիզ սրտայոյզ Հանաց ամեն բան

մոռնալու, ոչ մի բանի վրայ մտածելու, խենդի նման սկսաւ գրօսնուլ վանելու համար այն սրտայոյզութիւնը որ զինքն կը խեղդէր։

Փիլերուան ժամագրութեան երկիւղը երկար ատեն ներա քունը խանգարած ըլլալուն Լուիզ ժամը մէկին միայն եկաւ ծառուղիներու տակ։ Հանրի լսեց անոր չրջազգեստին խշրտուքը և մոտեցաւ, «Զվշտացա՞ք ինձ դէմ, ըսաւ նա, այսօր քեզ ըսածներուս համար»

Լուիզ անոր նայեցաւ. «ի՞նչ բանէ, ըսաւ»

Հանրի դիտեց որ նէ ի քուն էր և ոչինչ կ'լիշէր։ Այն ատեն աւազանին մօտ՝ ուռիի մը տակ նստարանի վրայ նստեցուց զանի։ Իր Լուիզն էր պարձակ իր քովն ձերմակներ հագած, արձակ մազերով, միչ րոպէ առաջ սիրուն աչերն արտոյզ կ'լքաք կ'լուսաւորէին։ Քանի կ'ժպտէր նէ այտերուն վրայ փոսիկներ կ'բացուէին։ «Շատ գոհ եմ քովդ գտնուելուս։ Ես այլ ևս չպիտի մեկնիմ . . . » մռմռաց նէ իր խուլ ձայնովը։

Հանրի անմնատուր կ'ըլլար այս երջանկութեան։ Ջնէ արթնցընելու գաղափարը զինքը կ'զարհուրեցնէր. միթէ չպիտի կորուսեր զայն. ի՞նչ հոգ եթէ այս սէրը միայն երազ մնար. կեանքն իսկ երազ մը չէր միթէ. բաց ասոր՝ Լուիզ կ'սեսնէր, կ'լսօսէր, կ'խորհէր . . . և սակայն ո՛չ, պարտաւոր էր զնէ արթնցընել։ Որչափ ատեն որ նէ իր ճշմարիտ իմացականութիւնը չունենար, այս սէրը եղերական էր, ինք գող մ'էր որ նէրա պգուանքները կ'գողնար, զնէ կ'խաբէր . . . ։

Երիտասարդը ներա ականջին մօտեցընելով իր անհուն սէրը ա-նոր յայտնելու համար ամենէ վառվռուն, ամենէ յստակ բառերը ընտրեց, մօտէն, շատ մօտէն խօսեցաւ ներա, յուսահատ պրկախառնութեան մը մէջ, որպէս զի սիրոյ այս արտայայտութիւնը ներա հոգւոյն խորը թափանցէ և արմնաւէ վերջ մտածութեան չը դատապարտուի։

Այլ ի՞նչ միջոցաւ չլատել պէտք էր այս մղձաւանչը առանց զնէ ահաբեկելու. ցնցում մը կրնար զայն խելակորոյս ընել, կրնար նէ մարել, աղաղակներ արձակել։ Նէ ուրիշ օրուանէ աւելի ուժգնապէս կ'սերևէր այդ գիշեր, ջազին տագնապ մը նէրա կուրծքը կ'ուռեցընէր։ Խորին հառաչ մ'արձակեց, ձեռները երիտասարդին ուսին յենլով՝ գորովանօք, նեղութեամբ և նըն-ջելով իրը յոգնած՝ «Մի մեկնիք . . . կ'ըսէր նէ, կ'երկնչիմ։ Երբ մեկնիք ինձ այնպէս կ'երևայ թէ պիտի մեռնիմ . . . »

Հանրի անոր գլուխը վերցուց, ներա լսխող աչերը միչտ յերկինս կ'նայէին . . . ։ Երկար լռութիւն մը տիրեց իրենց մէջ, գոր աւազանի ջրերու ցայտումը և քաղաքի փողոցներու չունե-րու հաչունը կ'խանգարէին։

Հանրի աւելի սերտիւ գրկեց զայն, ներա գլուխը ձեռացը մէջ առաւ և դէմ առ դէմ նայելով այն աչերուն մէջ որք կը փայլատակէին, որպէս թէ բիբերուն տակ բոցեր կային։

— Լուի՛զ, դուշեց։
— Ա՛յո՛ . . . ։
— Ինձ նայէ՛։

Նէ հառաչը կ՚ելեց, իր դող բերնին հծծիւնը ունդունքէն խոյս առաւ։

— Կ՚սիրէ՞ք զիս, Լուիզ։
— Հոս չպիտի ըլլայի եթէ ձեզ չսիրէի։
— Ընդ մի՞չտ . . . ։

Նէ հառաչեց։

— Ես ալ, Լուիզ, կ՚սիրեմ ձեզ, կեանքս ձերն է։ Բայց այս սէրը զիս կ՚վշտահարէ, վասն զի ձեզ համար երազ մ՚է այն . . . այո՛, միայն երա՛զ, տեսի՛լ . . . ։ Ես արմատն եմ, Լուի՛զ, բայց դուք, դուք կ՚քնանաք, կ՚իմանա՞ք, Լուի՛զ, ի քուն կ՚ք։

Հանրի վանկերը երկարօրէն կ՚հնչէր զայն ընկճելու, համոզելու համար։ Նէ դառն ժպիտ մ՚ունեցաւ, որպէսզի ճգնաժամի մէջ կ՚տառապէր, և տակաւ ձայնով մը.

— Ո՛չ, ըսաւ, չեմ քնանար . . . ապահով եմ։
— Ա՛յո՛, Լուիզ, կ՚քնանաք . . . ։ Բայց պիտի արմնցնեմ ձեզ. պէտք է . . . ։

Այն ատեն իր բոլոր ոյժով զնէ գրկեց և ժամանակ չտալով նէրա ոչ միւնք ճանչէ, իր մաչիւնակը աւազանի ջրէն խրչեց և ուժգնակի նէրա դէմքը պատեց. յետոյ նէրա ամբողջ մարմինը ցնցելով իր ձեռներով անոր այտերը ընդհարեց, անոր ականջին գոչելով « Արմնցէ՛ք, Լուիզ . . . ։ Լուի՛զ, արմնցէ՛ք։

Լուիզ այս յանկարծական յարձակումէն սարսափած, որու ինչ ըլլալը չգիտեր, ձեռքերը կ՚պարկէր որ մաչիւնակը բռնէ ոտով երեսը ամփոփուած էր և չունչն կ՚կարկր։ Նէ յանկարծ աչերը փակեց, գլուխը յետկոյս ընկաւ, մազերը աւազին դպան, ձեռները անշարժ կալա մնացին, և Հանրի նէրա ուսերը բռնեց վերցուց որպէսզի չիյնայ։ Կարծէն խորին երկար չունչ մ՚արձակեց նէ, բացաւ իր աչերը և մտներուն ծայրով արտևանունքին դպելով. « Ի՞նչ կայ . . . , ի՞նչ է այս ըսաւ »

. . « ես եմ, Լուիզ, ես, Հանրին, մի երկնչիք, մի խռովի՛ք » Մարիկ ըրէ՛ք ինձ . . . ։ Պարտէզին մէջ էք ինձ հետ։ Ցիշեցէք մեր երկկի տեսութիւնը։ Ձեզ ըսած էի թէ պիրար կ՚սիրէինք, ամեն իրիկուն կ՚տեսնուէինք, թէ գիշերներն կընելով և ի քուն կըգայիք զիս դտնել։ Հրամայեցիք որ ձեզ արմնցնեմ. ահա արմնցուցի։ Ձեր տունն ենք, պարտիզին մէջ . . . ։ Կը ճանչէ՞ք զիս . . . ։ Ո՛հ, մի մերժէք զիս, կ՚աղերսեմ։ այժմ որ գիտեմ թէ իրապէս դուք էք որու կ՚խօսիմ, կ՚դողամ, կ՚վախնամ որ ձեզ պիտի կորուսեմ . . . ։ ըսէ՛ք թէ կ՚ներէք ինձ, կ՚սիրէ՞ք զիս . . . ։

Լուիզ Հանրիի մօտ նստած տեսնելով ինքզինք ամբողջ մնաց, իր չրջագեսը քաշեց, պահ մ՚ընկրկեց և խորունկ ուցաւալի ակնարկ մը նետեց անոր վրայ. յետոյ ամեն կողմ նա-

յեցաւ մոլորագին դէմքով մը՝ ձանչեց պարտէզը, տոսախները, ծառուղիները, պատերէն վար ընկնող բաղեղները, ցօղացող աւազանը, ագռաւիայի ծառերը։ Այս ամենը իրեն ընտանի էին, և իր յիշողութեան մէջ ամփոփուեցան։ Զգաստութեան և զարմացման ձիգ մ՚արձակեց ու «Այո, այո՝ . . . կ՚ճանչնամ, ըսաւ նէ։»

Նէ յիշեց իւր սիրային նուաղումները, խորհրդաւոր գիշերները, այն տագնապները, որոց ենթակայ եղած էր։ Այդ երազները յանկարծ իրականութեան փոխուած կ՚գտնէր այնպիսի խորհրդաւոր քնով, որմէ այլ ևս չէր ուզեր արթնկել, վասնզի անգէտս բոլոր հոգւովը սիրած երիտասարդին դրկացը մէջ սրթընալու հրապուրելի գարմանքը կ՚ընծայէր իրեն։ Առանց թողլու նստարանը, դէմքը մազերուն մէջ ամփոփելով, կարծես կուզէր նորէն իր քնոյն մէջ թաթախիլ և իր երազը վերակսիլ։ Միացնելով իր ձեռքերն որպէս թէ կ՚աղօթէր և շարունակելով աչ և ձախ նայիլ։

— Ձի՞շտ է ուրեմն, կ՚քնանայի՞, ըսաւ։

— Այո՛, կ՚քնանայիք։

— Եւ ամէն գիշեր դուս կ՚գայի։

— Այո՛։

— Ձեզ տեսնելու համար։

— Այո՛։

— Միայնա՞կ։

— Այ՛ո, մինակ։

— Որքա՞ն ժամանակէ ի վեր։

— Շարաթէ մ՚ի վեր։

— Եւ ի՞նչ կ՚ըսէի . . . ։

— Կ՚ըսէիք թէ գիս կ՚սիրէիք, թէ իմ էիք Լուիզ, սիրականըս ըսէք թէ չեմ երազած։ կ՚սիրէք գիս։

Լուիզ այժ չուներ այս նախախնամական գորովը մերժելու։ Ոտք ելաւ, Հանրիի կրծքնեցաւ և իր խոշոր հանդարտ աչերովք պահ մը գանի դիտելէ վերջ՝ լուրջ ձայնով մ՚ըսաւ, Աստուած է որ այսպէս կ՚կամի։ Սկիզբ վազը մեր տունը . . . մայրիկը մեզ պիտի օրհնէ . . . ։

Վեց ամիս վերջ Հանրի և Լուիզ կ՚ամուսնանային։ Մայրը արտասուք կ՚թափէր՝ քանի իր աղջկան պատմութիւնը մտիկ կ՚ընէր։

Լուիզ չ՚ևներ ալ ևս գիշերներն. մայրութիւնը իրեն բոյժ տուած էր։

Թաթֆմ.

Վ. ՌԱՀԱՆ

ԻՄ ՄԱՆԿԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԷՍ

Ի՞նչ են այս դիտողութիւնները։

Մեր յիշատակագրութեան ընթացքին մէջ ընդարձակօրէն նկարագրեր ենք տիպարներ՝ որք ըստ ինքեան այնքան կչիռ և կարևորութիւն չունէին, ծանրացեր ենք մանր պարագաներու վրայ՝ որոնց մասին չէր արժեր ծանրանալ, ու թերևս՝ ինչպէս կռահելի է՝ յիշատակութիւն իսկ ընել։

Կը խոստովանինք թէ չենք կրնար համակարծիք ըլլալ այս դիտողութեանց՝ որքան և մեր համարումը ու մեծարանքը մեծ ըլլայ սոնոց հեղինակին վրայ։

Մեղ կը թուի թէ յայտնուած այս կարծիքները փոքր ինչ դասականութիւն կը բուրեն և դասականութեան հնաւանդ անմուխ սահմաններն անդառնալի կերպով ընդարձակուած են այսօր՝ լայն ու բեղնաւոր ասպարէզ մը բանալով նոր գրողներու առջև։ Հին ժամանակ նկարագրուած դիւցազը անպատճառ պէտք էր մեծ և նշանաւոր մէկն ըլլալ, թագաւոր, իշխան, զօրավար եւն։ կարծես անոնք միայն տիպարներ ընծայելու մեծնաշնորհն ունենային կենցաղի մէջ, իսկ խոնարհագոյն անձինք իրենց կարգին տիպար ըլլալու յատկութենէ իսկ զուրկ ըլլային։ Այլ տիպարն ընկերական ամէն կարգի մէջ կրնայ գտնուիլ, վերէն սկսեալ ինչուան վարը։ Ի՛նչ կարևորութիւն որ ունի բարձր տիպար մ՚իր չրջանակին մէջ, եթէ գրելով թէ գերծ իսկ ըլլայ չափազանցութենէ, մի և նոյն և հաւասար կարևորութիւն ունի և խոնարհ տիպար մը։ Մանաւանդ որ տեսարան կը հանէինք այնպիսի տիպարներ՝ որք կորսուելու վրայ են դոնէ մեր միջավայրի մէջ, և որք ուսումնասիրութեան նիւթ եղող դար մը մանաւոր կերպով յատկանիշելու կը ծառայեն։ Վիքթօր—Հիւկօ որ վիպական դպրոցի գլուխ համարուեցաւ և որ Յունուարի 19րդ դարուն գրական ամենէ մեծ փառքն է, չէ թէ պատահարար նկարագրեց, այլ մէյ մէկ յաջող հերոսներ ըրաւ աւազակապետ մը, համանուհի մը, փիլիքատլէս ու բարոյապէս ազնիւ հոպիտ մը։ Նօթր—Տամ մէջ իր գլխաւոր հերոսներէն մէկը գնչուհի մ՚է, միւսը մարմնապէս և մտապէս անհնթեմի խե՞ղճ զանգակահար մը՝ Գազիմոտօն, որու ներքին և արտաքին ուսումնասիրութեան նուիրած է երկար և աքանչելի էջեր՝ որք անմահութեան դրոշմ կը կրեն։

Կրնա՞ս մեղադրել պատկերահան մը թէ ինչո՞ւ իր բոլոր ճիգն ու տաղանդը թափած է անլիքար մը, մուրացիկ մը, անշուք վերելակ մը նկարելու, և եթէ յաջողած է պատկերը՝ կարո՞ղ ես քու հիացումդ չզնորհել անոր այնքան՝ որքան պիտի չնորհէիր եթէ պերճ մէկը նկարած ըլլար։ Յանգա՞նք թէ արժանիք կը համարես յետին մանրամասներ՝ զոր իր ուշագիր վրձի-

նը զանց չէ րրած նկարել մի առ մի, պատառած լաթեր, բազմաթիւ կապերտներ, ցնցոտիներու ծակերէ երևցող մարմնոյ մասեր, փերեզակի կտոր բրդուկ տապատ մ'իր ողբմելի պարունակութեամբ, որոնց ամէն մէկը իրեն յատուկ կարևորութենէ զուրկ չէ անշուշտ պատկերին ճշտութեան և ամբողջութեան վերաբերմամբ։ Ենէնքի մը մէջ ամենափոքր քարը, ամենափոքր զարդը իրեն յատուկ տեղը կը գրաւէ, ուելորդ բան չկայ։ Ցնտին միջոցը՝ յեսին թափթփուքն իր չահեկանութիւնն ունի՝ երբ անցեալը ծածկող քօղի մէկ ամենապզտիկ մասը վեր վերցընելու կրնայ ծառայել։

Կը յիշենք այն մանրամասն և մանրակրկիտ պարագաները՝ խղճամիտ և անխոնջ հետազօտութեանց արդիւնք, զորս Վիքթօր Հիւկօ զանց չէ ըրած յիշատակել Նօթր – Տամ մէջ, երկ վեպեմ, աքանչելի պատկեր մը Միջին Դարու։ Արդ ո՞ւր և վայրապա՞ր էին այդ մեծ հանճարի բազմաչխատ հետազօտութիւնները ու թափած անհուն ճիգերը։ Գա՛լիլէի որ վմեզ որ և է կերպիւ այդ եղական հանճարի հետ բազդատել ուզենք, ի՞նչ որ կուզենք հասկցնել այն է, թէ մեծամեծ հեղինակներ ո՛չ պղտիկութիւն և ո՛չ ժամանակի կորուստ կը համարին զբաղիլ այդ մանրամասնութեամբք, որոնց կարևորութիւնը կը գնահատեն իրենց առաջադրեալ նպատակին լաւագոյն պայմաններու մէջ հասնելու համար։

Ի՞նչ է Նօթր – Տամ նիւթը։ Պատմին դէպք մ'որ իրր թէ Միջին Դարու մէջ տեղի ունեցեր է, և զոր Վիքթօր Հիւկօյի հզոր գրիչն այնքան արտայոյտ և աքանչելի կերպով կը պատմէ։ Անմահ հեղինակին բուն նպատակն է պատմութեան այդ ուշագրաւ դարագլուխը՝ մասնաւորապէս Ֆրանսայի վերաբերութեամբ՝ իր ընթերցողի առջև պարզել իր բարքերով, իր զգաստարներով, իր նախապաշարմունքներով, իր տարաշներով, իր սովորոյթներով, և մերթ ամենէ աննշան պարագաներով իսկ։ Բարիզ քաղաքը ուր դէպքը պատահած է, առանձին և ընդարձակ գլուխի մը մէջ ճառուած է իր հին հրապարակներով, իր հին թաղերով, իր հին փողոցներով, իր հին չէնքերով, իր հին տուներով անգամ։ Նօթր – Տամի եկեղեցին՝ որ գլխաւոր կայանն է գործողութեանց, նկարագրուած է մասնաւոր և վսեմ հատուածով մ'ուր նաև վարպետի գրիչով ի հանդէս հանուած է Միջին Դարու հարտարապետութիւնը։ Դիտելու արժանի բան է թէ մեծ վիպագիրն՝ որ կարծես իր նիւթը մոռցած է բոլորովին, ինչ մեծ ճեռնհասութեամբ կը խօսի, կը վարի, կը ոգևորի, կ'աչխատի տպացուցանել — և յաղթօղարար կ'ապացուցանէ — հին ճարտարապետութեան յաղթանակը նորին վրայ՝ զոր գծուծ և աննշան կը գտնէ և զոր պիտակ կ'անուանէ։ Իր կարծիքները, իր տեսութիւնները պարզելու՝ իր ժողված մանրամասն գիտութիւնները տեղաւորելու համար ոչ մէկ տեղիկը փախցնէ նա։ Նոյնն ըրած է նաև «Թշուառներու մէջ» որ իր բեղնաւոր գրչի մէկ ուրիշ աքանչելի արտադրութիւնն է,

հրաշակերտ մը վսեմ ու աննման։ Ի՞նչ փոյթ գրականութեան այդ մեծ աշխարհակալի համար թէ չարունակ կը չեզի իր վէպի նիւթէն՝ որ սակայն աշն աստիճան կը հետաքրքրէ ընթերցողը։ Եւ ոչ իսկ ի հաշիւ կ'առնու առթելիք բնական դժկամակութիւնը՝ անվերջ ընդհատումներու մասին. իր չեզանքներու կարևորութեան գիտակցութիւնն ունի նա, չարունակ կը յառաջանայ անոնց մէջ չատերու անախորժ և նոյն իսկ ձանձրացնող երևալու անպատեհութիւնն աչքը առնելով . . .։

Մենք ևս՝ հիւլէ մ'այդ հսկայ իմացականութեան քով. մեր մասին ձեռքերնիս գտնուած նիւթերու ոյժով փափաք ղգացինք, և այս փափաքի գործադրութիւնը օգտակար երևցաւ մեզի, իր լրութեանը մէջ պատկերել դարագլուխ մը, ժամանակագրական այնքան մօտ մեզ (30 — 40 տարի յառաջ), այլ ոգւով և նկարագրով արդէն այնքան հեռի, և որու ուղղակի ծնունդ է մեր ներկայ կեանքն։ Այս նկարագրութիւնը՝ միայն Իզմիրի Հայուհը չէ՛ր անշուշտ, ինչ որ կ'աւելցնէր հարկաւ անոր կարևորութիւնը։ Եթէ պատկերը ճիշտ է՝ նման է, եթէ կարող եղաւ ընթերցողին առջև բերել այդ հետաքրքրական ժամանակն՝ իր անհատական սակայն ամենատոյդ պարագաներով՝ չենք կարծեր թէ տեղի մնայ ուրիշ խօսքի, նոյն իսկ եթէ մեր փառաքի տաղանդով կարող չենք եղած հաճոյական և հրապուրելի ձև մը տալ անոր։ Մեր յանցանքը ա՛յդ միայն եղած պիտի ըլլայ՝ հետուէն թէ մօտէն կշռաւոր անձնաւորութիւններէ մեզ հասած հաւանութեան ձայները համարելով տպակսէս զմեզ խրախուսելու ազնիւ և բարեխրատ ճիգեր. . .։

Ուրիշ խօսք եթէ տոհմային բարուց և գաղափարներու չարժման պատմութիւնը կարևորութենէ զուրկ կը դատուի։ Այլ ինչ՞ու կարևորութենէ՝ զուրկ դատուի այն, ինչ՞ու խնամով չուսումնասիրուին այն հին երևոյթներն՝ որոնցմէ կարդ ըստ կարգէ անցանք հոս հասնելու համար . . .։

Ա՛լ ժամանակ է սակայն՝ որ վերջ տալով այս մինչանկախ խորհրդածութեանց՝ ձեռք առնուք մեր «Ցիշատակները» . . . իրենց նախնական պարզ ծրագրի վերածուած։ Գտնենք նորէն Անդրէաս վարժապետը որ մեր դպրոցական յիշատակներու մէջ ամենամեծ տեղ մը կը բռնէ և զոր պահ մը մէկ կողմ ձգած էինք՝ զանազան հին հոսանքներէ քշուած՝ որք հատուտատպէս այլ ևս դուրս կը մնան մեր հիմնադրէն։

Թերևս կը յիշեն ընթերցողք թէ մեր վերջին տեսութիւնը հերաւտ Պօղոս վարժապետի վրայ էր։ Արդ Պօղոս բարի վարժապետէն Անդրէաս բարի վարժապետին՝ ուսուցչական սանդուղքի ամենէ խոնարհ աստիճանէն ամենէ վերին աստիճանին անցումը խիստ բնական է։ Ցաջորդ յօդուածներով պիտի չարունակենք ուրեմն ուսումնասիրել Անդրէաս վարժապետը՝ այդ հին վարժապետներու գերընտիր տիպարը մինչև անոր կենաց վերջին

օրերը և իր մահուան տխուր պարագաները՝ որք ժամանակակից են մեր ուսանողական տարիներուն։

Անկէ ետքը կարգը կուգայ պատմել Աղաբէգեան Մարկոսի՝ տեսչութիւնը Մեսրոպեան դպրոցի մէջ, անդրագոյն ուրիշ անցքեր, և հուսկ ուրեմն Իզմիրի ազգային վարժարանէ մեր հրաժեշտ տալու պարագաները։ Ատով վերջ պիտի դառնան մեր «Մանկական Յիշատակները», որք՝ ինչ որ ալ ըլլար իրենց նպատակը, դպրոցական կեանքի չրջանէն անդին չպիտի անցնէին քնականապէս։

(Շարունակելի) **ՄԵՍՐՈՊ ՆՈՒՊԱՐԵԱՆ**

ԿՈՅՍ ՀՐԻՓՍԻՄԷ ԹԱՅԻՐԵԱՆՑ

ԱԽԱԳ – ՍԱՐԿԱՒԱԳՈՒՀԻՆ

* * *

Առաջին ուխտը կատարեց Նորընտիր Հայրապետին օծման հանդիսին առթիւ՝ ընծայաբերութեամբ չէզմիածին երթալով, այն է, 600 րուպլի արժողութեամբ եկեղեցական պատկեր մը տանելով, ուր մեծ պատուով ընդունուեցաւ իբր ներկայացուցիչ Տփխոյ կուսակալին։

Նորին Վեհափառութիւնն, — որ կանխաւ լսած էր Կոյսին արժանիքն ու գնահատելի գործերն — հանեց՝ իր Պատրիարքութեան օրով ստացած կանանչ մատանին, որոյ փորագրութիւնն լրած է համաւատար արուեստագէտ Պէնալեան Մկրտիչ էֆէնտիին, և մատուց անոր, բացագանչելով մատանիին վրայ փորագրուածը՝

ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՒԱՏՔ Ի ՔԵՆ ՄԻ՝ ՊԱԿԱՍԵՑԻ

* * *

Երկրորդ ուխտն կատարել առաջադրեց՝ Երուսաղէմայ պարտուց համար գումար մը հանգանակելէ ցկնի։

Եւ ստուգիւ Կոյսն — Հոխիսիմէ քաջալերեալ և գօտեպնդեալ՝ չէզմիածնայ վերագարձէն յետոյ, տեղական կռնչոթչիներէն՝ ըստ օրինի ժողովներ և վաւերացեալ ստորն ստանալով՝ սկսաւ նպաստահաւաքութեան, ըսելով՝ վանուց քաշանային։

— Կե՛ր, Տէր — Աբսէն Հա՛յր, իրականացնե՛ք մեր վրայ դրուած յոյսերը, և գործի ձեռնարկենք »։

Ու կսկսին ի միասին դէս ու դէն, փողոցէ փողոց ժուռ գալ և հաւաքել գրամ։

Բայց ի՛նչ օգուտ, օրերը տարաժամած էին։ Ջատկական մեծ տօնը մօտեցած, սակայն և այնպէս, սուղ ժամանակամիջոցի մը մէջ դարձեալ յղոզած էին 3000 ի մօտ րուպլի հաւաքելու։

Ուստի, Կոյս–Հռիփսիմէ՝ երկար չուներ մը առնելով, գործակիցին ըսաւ։

«Ո՛չ, այսպէս չլինիր, նոր ուժի կը կարօտի՛նք։ Հարկ է ուխտը կատարեմ։ Պէտք է երթալ ի Ս. Սպիրմ, յանձնել հաւաքածներս անդ՝ իբրև թերհաչիւ, և ուխտս կատարելով վերադառնալ, ու նոր ոգևորութեամբ առաջադրեալ հանգանակութիւնս շարունակել։

Լրագիր ընթերցողները գիտեն որ՝ Մարկաւագուհին Հռիփսիմէ Պոլիս եկաւ, և ուղղակի հրաւիրուեցաւ Երուսաղիմայ վանատունը, իրեն անբաժան ընկերակից և ուխտակից ունենալով Տիկին Սօֆիա Ստեփանեանց, որ աւելի այրի մայրապետի կը նմանի, քան այրի Տիկնոջ, և Կոյս Հռիփսիմէն՝ ընկերակից և խորհրդակից առնելով զայն, ասկից աւելի լաւագոյն ընտրութիւն մը արդարև չէր կրնար ընել։

* * *

Թո՛ղ ներուի մեզ, եթէ մը զարտուղիլ մեր գծէն, քանի մը տող ծանօթութիւն տալու համար այս ազնիւ և բարեկիրթ կնոջ մասին, ի յարգանս ուխտադնացութեան և լուսաբոյրութեան։

Տիկին Սօֆիա Ստեփանեանց՝ բնիկ Շուշեցի է, — ծնեալ Պ. Պապայ Սաֆարօֆ — և ամուսին՝ հանգուցեալ Սիմոն Ստեփանեանցի, յորմէ ունեցած է չորս արու զաւակ, և այրիացած՝ 1881 ին։

Իւր որդիքն՝ Պ. Գրիգոր և Յովհաննէս, ի Տիֆլիս ծխախոտի գործարանատէր են, և միւս որդիքն են Արշակ և Յակորիկ, առաջինը՝ յանձնակատար (քօմէսիօնճի) յՕմէսա, իսկ վերջինը՝ դեռ ուսանող պատանի մը Խարքովի Համալսարանին մէջ։

Այրի Տիկին Սօֆիա Ստեփանեանց՝ Ղարապաղէն մեկնելով, ի Տիֆլիս հաստատուած է այժմ, և կը բնակի եղբօրը՝ Պ. Միքայէլ Սաֆարեանցի քով։

Ասոնց տունը՝ նահապետական կազմութիւն մը ունի ի նմանս, ուր մեր կաթողիկոսական վերջին ընտրութեան պատգամաւորներէն ոմանք մեծ ընդունելութեամբ հիւրընկալուեցան։

Այս բազմանդամ ընտանիքն՝ (Տիկին Ստեփանեանց) իր զաւակներէն զատ, ամուսնացեալ՝ Գրիգոր որդիէն ալ երեք սիրասուն թոռներ ունի, ինչպէս և Միքայէլ եղբայրը՝ վեց զաւակներ։

Ասոնք ամենքը՝ իբրև նահապետական ընտանիք, ի միասին կը բնակին։

* * *

Կոյս — Հռիփսիմէ՝ Պօլիս հասնելով Ապրիլի սկիզբը, ամեն կողմանէ գացին իրեն 'ի տես և յայցելութիւն, և ամենքն ալ չկրցան իրենց համակիր տպաւորութիւնները չի յայտնել հրապարակաւ ալ, նմանեցնելով զինքը մեր ողբացեալ Գալֆեան Սրբուհի Մայրապետին, որ իրաւամբ Պօլսեցւոց ժամանակակից հայ փառքերէն ու պարծանքներէն մէկն էր։

Կոյս Հռիփսիմէն՝ 1882 ին Կովկասեան կրկին ուղևորութեանս մէջ տեսնելու բաղդատորուած էի 'ի Տփխիս, կուսանաց վանատունն, և Ս. Աստիաննոսի եկեղեցւոյն մէջ, ուստի 'ի Պօլիս դառնալս ժամանակ՝ չկրցի այցելել իրեն, գիտնալով որ արդէն յերուսաղէմ մի և նոյն վանքին մէջ պիտի միաբանիմք։

Եւ արդարև, յերուսաղէմ, ի Բեդղեհեմ, ի Ս. Գերեզման, ի Գողգոթա, ի Ս. Գիւխադիր, Պարոն – Տէրի Աւագին, և այլն, մեկտեղ օրեցանք, և Ջատկական ընտրհաւորական փոխադարձ պարտուց մէջ չհիմերցանք։

Ուխտաւոր — Սարկաւագուհին երբ յերուսաղէմ հասաւ, իր ձեռքը տարաւ յանձնեց հանգանակաց դումարն՝ առ Ա.մեն. Սրբազան Պատրիարք Հայրն, և սկսաւ բոլոր տնօրինական Ս. Տեղերն կարգաւ այցելել, իր ընկերուհւոյն՝ Տիկին Սօֆիայի հետ, նուէրներնին անպակաս ընելով ամենուրեք։

Կոյսն՝ յատուկ ճաշ տուաւ ժառանգաւոր աշակերտաց, չաքարեղէններ բաշխեց Ս. Յակոբեան սանուց, սեղան սարքել տուաւ մեղուաչեան Միաբանութեան, մասնաւոր պատարագներ ընել տուաւ Ս. Գերեզմանին վրան և այլ Սուրբ տեղիս, հոգեհանդիստ կատարել տուաւ, վարագուրաց և այլ անուններով նուէրներ բաշխեց վանքին, միաբանաց խուցերը այցելելով՝ առանձին ժամուցներով մխիթարեց ծերուկն և խոնջեալ վարդապետները։

* * *

Ա.մեն. Ցարութիւն Պատրիարք, Կոյսին ընդարձակ բարեպաշտութիւնն 'ի նկատի առնելով՝ նուիրեց գամապետուհի Կոյսին լանջակիր ադամանդազարդ խաչ մը՝ Հռիփսիմեանց կուսանաց մասունքով, որ վերադարձին կը կրէր իր սրտին վրայ՝ առէջ համբուրելով զայն։

Կոյս – Հռիփսիմէ՝ Երուսաղէմէ վերադարձին՝ կը փափաքէր վենետիկ անցնիլ, ինչպէս կանուխէն ճանապարհորդաց և տեսած էր Վիէննայի վանքը, սակայն տրամադրութիւնը փոխելով՝ դարձաւ Աղեքսանդրիոյ ուղեգծով, ու չաբախ մը ամբողջ մնաց Աղեքսանդրիա և 'ի Գահիրէ, տեղւոյն նշանաւոր հաստատու-

թիւններն ու պատմական հնութիւնները այցելեց, ինչպէս և ի Մայրաքաղաքս գալով՝ Կայսերական թանգարանը, Սուլթան Ահմէտի մօտ հնութեանց ցուցահանդէսը, և Այա – Սոֆեան, «զի Կոյսն՝ Պօլսէն անցած ժամանակ արդէն ազգային հաստատութեանց մէկ մասին և մէկ քանի բարձրաստիճան եկեղեցականաց այցելած էր ու այցաքարտն՝ Տփխիսու վիճակաւոր Սուրբէնեան Գէորգ Եպիսկոպոսի տոմսին հետ միացնելով, երէցեան Գեր. Տ. Գէորգ Վարդապետին հետ հաղորդակից էր առ Ամեն. Տ. Մեսրոպեան Սրբազան, և ինքն՝ առանց աստ և անդ դեպերելու, Մայրաքաղաքս թողած՝ ու գացած հանգչած էր ի չոգենաւն Ռուսական, որպէս զի չուտով հասնի իր սիրած Կուսաստանը, ուր 30 տարիներէ ի վեր կեանքը կը հոլովէ։

* * *

Ինչպէս վերև յիշեցինք, մենք ալ առիթ ունեցանք տեսնել Կովկասի համրաւաւոր Սարկաւագուհին Ս. Սաղիմայ մէջ, և ինչ որ գրեցինք, չատ քիչ կը գտնեմք՝ բաղդատմամբ իր արժանեաց, և կը մաղթենք որ Տփխիսու կուսանոցն, Կոյս Հռիփսիմէի նմանները չատցնէ, յօրինակ և ի խթան կարգ մը դիւրակեաց կիներու, որք աշխարհային կենաց մէջ մտքերնին չեն բերեր բնաւ աղգային ու երկնային, այլ ինքզինքին կը մխիթարեն՝ ոմանք պարծենալով իրենց հարստութեան վրայ, և այլք՝ իրենց գեղեցկութեան վրայ, որոց երկուքէն ալ դուրկ չէ Կոյսն – Հռիփսիմէ։ Զի ունի թէ բնական գեղեցկութիւն, և թէ չափաւոր հարստութիւն։ Ինչպէս ցարդ կը յիշուի, Թաւրիզեանց Հռիփսիմէ, Կոյսի՝ հայրենի ժառանգութենէն սեպհական Ամարանոցն, Կրծանիսթ գիւղին մէջ, ուր կը գտնուի նաև Հայոց Միրանաւոր Ս. Աստուածածնայ վանքն, որ այժմ Ս. Գեղարդ կ'անուանեն, որոյ Ս. Մասունքը մեր եկեղեցւոյ առիթ դուրս կը հանեն։

Այս պատմական գիւղին մէջ լաւ այգիներ և բազմաթիւ տուներէ զատ մօտակայ Թէլէթ լերան վրայ՝ Ս. Գէորգ անուամբ ուխտատեղի մ'ալ կը գտնուի։ ուր կերթար շատ անգամ Հռիփսիմէ։

Վերջապէս, Հռիփսիմէ – Կոյս Թաւրիզեանց կրնայ օրինակ լինիլ և Հայ աղջկանց, որք պէտք չէ մոռնան ազգային ուխտատեղիներն, վանքերն և եկեղեցիներն, որով պիտի չափաւորեն իրենց աշխարհային քմահաճոյքներն, և այսպէս պիտի վայելեն ու պանծացնեն իրենց բնածին հայկական համեստութիւնն։

Ա. Ճ. ԱՃԵՄԱՍԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԸ

Վերջերս կեդրոնական վարժարանին վրայ գրեթէ չի խօսուիր քանաւ. որմէ կրնայ ենթադրուիլ թէեւս թէ վարժարանը լաւ բարեվիճակի մէջ է և հանրութիւնը գոհացնող դպրոցական ծրագիր մը ունի. Արդարև կրնայ ըսուիլ թէ վարժարանին վիճակը բարեկարգ է, որովհետև հոն կը դասաւանան պօլսոյ ընտրելագոյն խումբ մը հայ ուսուցիչներ, մեծ մասամբ կարող և փորձառու, և որովհետև մանաւանդ հիմնական Տնօրէնը, Պոտիչեան էֆ. կը ջանայ վարժարանին դիրքն ու վարկը բարձր պահել և դպրոցին ծրագիրը նոր նոր բարեփոխութիւններով ժամանակին պահանջումներուն համաձայնեցնել ըստ կարելւոյն, ու եւրոպական նմանօրինակ հաստատութիւններուն ուղղութիւնը տալ անոր. նոյն ոգին ու նոյն նկատումները ունի նաև վարժարանին խնամակալութիւնը։

Սակայն մեր մէջ պէտք է որ ազգային հաստատութիւն մը, թէև արտաքուստ բարեկարգ վիճակ մըն ալ ունենայ, հանրութեան ուշադրութեան առարկան ըլլայ միշտ. քանի որ կ'ուզենք հանրութիւնը հոգածու ըլլայ և իր համակրանքովն ու գուրգուրանքովը շրջապատէ զայն։ Կեդր. վարժարանը ազգային հաստատութիւն մըն է, պէտք է ուրեմն վայելէ ազգայիններուն համակրանքը, և ազգին պահանջումներուն և կրթական պէտքերուն գոհացում տայ իր ամեն տարի տուած ուսումնասիրաներովը։

Հոս պիտի թուենք քանի մը ծրագրական և դասերու բաժանման անպատեհութիւններ, որոց համար վարժարանին Տնօրէնին և խնամակալութեան ուշադրութիւնը կը հրաւիրենք։

Անժխտելի իրողութիւն մըն է որ կեդր. վարժարանին մէջ սկիզբէն իվեր գիտութեանց աւելի մեծ կարեւորութիւն ընծայուած և հետևաբար ժամանակ սահմանուած է, քան գրաւոտմամբ միւս ուսումներուն։ Թէև 93-94 տարեշրջանին մէջ Դ. և Ե. կարգերուն (Բ. շրջան) համար գրաւոթեան և գիտութեան բաժանումներ եղան, բայց միւս երեք կարգերուն (Ա. շրջան) նոյն նախկին չարչարանք վիճակը կ'շարունակուի։

Ամեն մէկ կարգ օրական հինգ ժամ դաս ունի. եթէ ուսանող մը իւրաքանչիւր դասի համար գէթ ժամ մը աշխատի, պիտի պարտաւորի, դպրոցէն դուրս, հինգ ժամ շարունակ գլուխը կախել գրասեղանին վրայ՝ և տոկալու համար այս աշխատութեան, խիստ գոհացուցիչ առողջութիւն մը պէտք է, — եթէ երբեք չենք խանդարիր ամենէն լաւ կարծուած առողջութիւնները չսփաղանց մեծաւոր աշխատութեամբ։ * Մանաւորապէս գրաւոր տրուած դասերն են որ կը դժուարեցնեն աշակերտին աշխատութիւնները. տասնեակներով տետրակ չեն բաւեր իրենց ընդօրինակութեան և պարտականութեան համար։

Աշակերտներ կան, որոնք դեռ առաջին կարգերուն մէջն են, և չարաչար աշխատելով, հազիւ կրնան հասնիլ իրենց դասերուն։ Անցած օր աշակերտ մը կը գանգատեր թէ բնական գիտութեանց դասատուն ամբողջ տարին միայն կը խօսի վերջացական կերպով, առանց փորձելու, — մինչդեռ

* Երկրորդ յօդուածով մը պիտի խօսինք դպրոցական առողջապահութեան վրայ։

վարժարանը անոր համար ամեն դիւրութիւն ունի, քանի որ ամեն գործիք և առարկաներ կան դասարաններուն և laboratoire ին մէջ—, առանց տուած դասերը պահանջելու, և առանց նոյն իսկ դասախօսութեան ժամանակ աշակերտները հետաքրքրելու՝ գէթ երբեմն պատասխանելով անոնց հարցումներուն. ժամ մը կուգայ մի՛ միայն կը խօսի եղեր ու կերթայ, և քննութեան մէտ կը բերէ եղեր դէղ դէղ թուղթերը, դասերուն ամփոփումը, զոր նոր դրած է, և զոր աշակերտները պիտի ընդօրինակեն ու սորվին, արդէն խօսուած դասերէն բան մը չեն յիշեր անոնք, տեսարակէն պիտի սորվին, այս տաք օդին, կարճ գիշերներուն. կ'արժէ որ քիչ մը մեզքնանք մեր ուսանողութիւնը։

Նաև շաբաթը չորս անգամ չափական գիտութիւն, ու այն ալ իրարու վրայ, Բշ. Գշ. Դշ. և Ուր. օրերը, բոլորովին կը տաղտկացնեն, կը զզուեցնեն ուսանողը, չենք գիտեր թէ ինչո՛ւ այսքան մեծ կարեւորութիւն տրուած է մանաւանդ չափական գիտութեանց, այնչափ կարեւորութիւն որ անմիջապես պատժոյ կ'ենթարկուին բացառապար՝ այն աշակերտները որոնք 5 էն պակաս թիւ ստացած են, բնաւ այսքան խստապահանջ չեն միւս դասերուն համար, ու անդին ժամ մը միայն յատկացուած է հայ. աշխարհաբարի, ժա՛մ մը միայն, ինչ կրնայ ապատուիլ այս չարաթական մէկ ժամէն. դասատուն գրելու համար նիւթ պիտի տայ, ընտիր հատուածներ պիտի կարդայ կամ կարդացնել տայ և վերլուծէ, ուշակերտներուն շարադրութիւնը պիտի կարդայ և սրբագրէ, գրագիտութեան դաս պիտի տայ և պահանջէ և այլն և այլն, ու այս ամենը մէկ ժամուան մէջ։ Ցաճախ մեր ուսանողներէն շատերը չեն կրնար պարզ նամակ մը շարադրել, մինչ շատ վարժ ու յաջող են եղեր եռանկիւնաչափութեան կամ X ին արժէքը գտնելուն մէջ։ Չափական գիտութիւնները, որոնց առաւելապես կարեւորութիւն ընծայուած և ժամանակ սահմանուած է, դժուար և չարչրկոտ ուսումներ են, մէկ տարուան սորվածը միւս տարին կը մոռցուի և դպրոցէն դուրս, թերևս — չըսեմ՝ ոչ մէկուն — շատ քիչի պէտք պիտի ըլլայ, բայց արդէն գիտութեան հետևիլ ուզողները կանուխէն վարժարանը կը ձգեն, և նաև չէ՞ որ գիտութեանց ընդարձակ ասպարէզ բացուած է բարերագոյն երկու կարգերուն մէջ։ Սակայն չկարծուի թէ չափական գիտութեանց ուսումը աւելորդ կը համարինք, բայց անպատեհ կը տեսնենք տեսական մասին այնքան կարեւորութիւն և ժամանակ տրուած ըլլալը։

Օտար լեզուներու ուսման և ուսուցման նկատմամբ ի՞նչ հոգ կը տարուի. այդքան ասւնէ ի վեր Ֆրանս. կը դասախօսուի մեր բոլոր վարժարաններու մէջ, սակայն չենք գիտեր վարժարան մը ուր աշակերտները մաքուր և կանոնաւորապես խօսին ուսած լեզուներին։ Օտար լեզու խօսի՛լ, քիչ մը թերևս այլանդակ գաղափար, երբ առ հասարակ մեր բոլոր ուսանողները մաքուր և կանոնաւորապես չեն կրնար խօսիլ, նոյն իսկ իրենց մայրենի լեզուն։ Մեր ուսանողները բարձրագոյն կրթութիւն առնելու կամ ազատական ասպարէզներու հետևելու համար եթէ Եւրոպա երթան, ամէն բանէ առաջ լեզուի կը կարօտին, եթէ հոս առևտրական կամ վաճառականական ասպարէզին մէջ մնանեն, լեզուի կը կարօտին. դասատուներուն ամենէն աւելի լեզուն է կարևորը։ Ասած մը կը յիշեմ. « Մարդ որչափ որ լեզու գիտնայ, այնքան կրկին մարդ կը սեպուի։

Մեր այս կրթական մեծ հաստատութեան մէջ միայն թուրք. և Ֆը-

բանասերն կ'աւանդուին իբրև օտար լեզու. իսկ Անգլիերէնն և Գերմաներէնն լեզուներուն ուսումը կամաւոր. — կամ եթէ կուզէք ճիշտը անուանական է։ Այս տարի Գերմաներէնն բնաւ չաւանդուիր, իսկ Անգլիերէնն 140 աշակերտէն միայն 15ը դաս կ'առնուին։ Ուսանողներուն մեծամասնութիւնը կը փափաքի Եւրոպական լեզու մըն ալ սորվիլ. և արդէն Գերմ. և Անգլ. լեզուներու ուսուցման պէտքը օրէ օր զգալի կ'ըլլայ։ Գերմաներէն լեզուի ուսումը ամէն տեղ վերջերս մեծ կարեւորութիւն կը ստանայ, և անհրաժեշտ կը նկատուի այսօր թէ՛ առևտրական ասպարէզի ընդգրկողներուն և թէ՛ բարձրագոյն կրթութիւն ստանալ փափաքողներուն համար։

Ի՞նչ է պատճառը որ աշակերտք չեն հետևիր այս երկու լեզուներու ուսման, քանի որ կը փափաքին սորվիլ։ Որովհետև թոշակաւոր թէ՛ ձրի, հարուստ թէ աղքատ, ամէնքն ալ պարտաւոր են վճարել 4 ոսկի որպէսզի հետևին Անգլ. ի կամ Գերմ. ի դասախօսութեան։ Ահա՛ պզտիկ վճարում մը արդելք կըլլայ շատ մը ուսանողներու Եւրոպական լեզու մըն ալ սորվելու և նոյն իսկ արդելք, թերևս, տպագային բարեյաջող ասպարէզներու մէջ յառաջդիմելու։ Կան բաւական ուսանողներ որոնք կը փափաքին Գերմանիա երթալ՝ մասնաւորապէս մանկավարժութիւն և հոգեբանութիւն սորվելու. բայց Գերմանիա երթալ, առանց ա, ե, ե, ը, է գիտնալու, այնքան կոյսերուն առանց իւղի լապտերով հարսանիք երթալը չպիտի նմանի։ Անգլիերէն սորվողներն ալ հարուստի զաւակներ են, կը հարցնենք թէ կարելի չէ՞ ընդհանրացնել այս երկու լեզուներուն մեկին ուսումը և (աշակերտներուն կամքին և փափաքին ձգելով անոնց մեկին ընտրութիւնը) պարտաւորիչ ընել, ու հիմակուան պէս թող միայն հարուստներուն մեծ նշանաւոր մը չսեպուի. կարգադրութեամբ մը կարելի է, կարծենք, չզրկել ուսանողները այնքան անհրաժեշտ և շատ տեսակէտներով օգտակար այդ լեզուներու ուսումէն։ Եւ քանի որ աղքատիկ ուսանողին առջև բաց է Կեդր. վարժարանին դուռը, թող չփակուի երբ կարգը գայ լեզուի ուսման. Տարեկան ոսկիի մը վճարումը նշանակութիւն չունի թէև հարուստին համար, բայց ահա՛ արդելք մը կըլլայ ան աղքատ ուսանողին, որուն առջև թերևս այդ լեզուներու շնորհիւ նոր նոր ասպարէզներ բացուէին։

Հայ. գրաբարի համար որոշուած շաբաթական երեք ժամի տեղ երկուքը պիտի բաւեր կարծենք Կեդր. վարժարանը մտնող աշակերտ մը արդէն քանի մը տարիներ նախակրթարանի մէջ գրաբարի դասեր առած է, և Կեդրոնականի մէջ ալ մինչև Ե. կարգը պիտի տեսնէ շարունակաբար։ Նոյպէս ալ չափական գիտութեանց փոխանակ չորսի, գէթ երեք անգամ դասախօսութիւնը շատ գոհացուցիչ կրնայ նկատուիլ։

Կ'ամփոփենք մեր դիտողութիւնները, ղրկս վարժարանին խնամակալութեան նկատողութեանը կը յանձնենք։

1. — Թէ Չափական գիտութեանց և Հայ. դրաբարի շատ կարևորութիւն և ժամանակ որոշուած է։
2. — Թէ Հայ. աշխարհաբարի (շարադրութիւն և դրագիտութիւն) շատ քիչ ժամանակ սահմանուած է։
3. — Թէ անկանոն կերպով կ'աւանդուին Բնական Գիտութեանց դասերը. ու դասին ամփոփումը կանխապէս տալու և դաս պահանջելու հոգ չի տարուիր։
4. — Թէ Անհրաժեշտ է պարտաւորիչ ընել Անգլիերէն կամ Գերմաներէն լեզուաց մեկին ուսումը։

ՄՈՍՍ.

ԿԷՍ — ԿՈՅՍԵՐ

ՀԵՂԻՆԱԿ Պ· ՄԱՐՍԵԼ ԲՐԻՎՕ

Քիչ չատ ազնուկ պիտի հանէ Պ· Մարսել Բրեվօյի գիրքը՝ որ այսօր հրապարակ կ'ելնէ, « Կէս — Կոյսեր » կը կոչուի այն, անունը՝ գրքին նիւթը կը յայտնէ։ Հեղինակն արդի ազգիկները տեսարան կը դնէ՝ որք սեպէ՛ թէ ելած են ազգկութենէ, որք բնախօսչէն ամբիծ են — կամ գրեթէ ամբիծ —, այլ կորուսած են այս վեհերոտութիւնը՝ զգացման այն թարմութիւնը, այն ամօթխածութիւնն՝ ուր պատանութեան գերագոյն հրապոյրը կը գտնուի ։ ։ ։ Մոքերնիդ բերէ՛ք այս նիւթի վրայ յօրինուած մրմնջները ։ ։ ։

Վաղուց ծանուցուած էր չարիքը։ Հանրի Բաւիւսօն իր աշխատիկ պատկերներու մէջ կը նկարէ օրուան նորելուկն եղած քանի մ՛ազգիկներ՝ որք խռովիչ համարձակութիւն մը կը յայտնեն, և Օքթաւ Ֆէօյէ կը հաստատէր թէ ճեմավայրի մը մէջ չրջագայած ատեն պարզ ազգի ներու խօսակցութիւն մ՛իր ականջին զարկած էր յանկարծ՝ որ ֆոպիկ մը էակ պէտք չունեցողներ։ ։ ։ Այս խօսքն անմոռաց մնաց փրանսերէն լեզուի մէջ։

Ազգիկներ կան, ազգիկներ ալ կան։ Պ· Մարսել Բրէվօյի նըկարագրածները հարուստ և անգործ դասի կը վերաբերին։ Յայտնի է թէ բազմաթիւ անձինք կը գտնուին ի Բարիզ՝ որոնց համար կեանքը չաճոյից և նաներութեանց հիւս մ՛է միայն։ Ընելիք կամ ընդունելիք այցեր, թատրոններ, երեկոյթներ, տուներու մէջ ճաշեր, արդուզարդ, չմկում (patinage), Պուլօնեի անտառը չրջագայութիւններ, ուղևորութիւնք ամառը և սիրաբանութիւնք ամէն ատեն, առանցմէ ահա՛ ճարակ կը գտնէ իրենց բոլոր գործունէութիւնը։ Այս միջավայրի մէջ ազգիկ մը կնոջ չափ ազատ է։ Ներքանութիւնք կ'ըլլան իրեն չատ չատ, իր յոչոգութիւններով կը չեչտանայ, կանուխէն էրիկ մարդու հետ խօսիլը կը տրվի, և հրատապ խնդիրներու մէջ կը նետուի առանց քաշուելու։ Զկայ բան որ խռովէ կամ չփոթէ զինք ։ ։ ։ Անգիտացածը կը գուշակէ, չհարդացածը պատմել կուտայ զիմացինին ։ ։ ։

Այսպիսի ընթացքներ քիչ անգամ անմեղ հանգամանք կը ունենան։ Մանր սէրեր կը զոդուին կը կազմուին՝ որք երբեմն ամուսնութեան կ'առաջնորդեն, և որք սակայն ատկ բանի մը չեն յանգիր։ ։ ։ Մնողք չեն կրնար համաձայնիլ, կամ պարզապէս երիտասարդը ետ կը քաշուի չկրնալով կարգուելու որոշումը տալ։ Սակայն և այնպէս կրցած է մանր չնորհներ ձեռք բերել օրիորդէն։ Մտերիմ տեսութիւններ, գաղտուկ տեղեր քաղցած համբոյրներ, մէջքի սիրատարփ սեղմումներ։ Եթէ պատուղը չէ քաղած՝ անոր բոլորը ընշած է գէթ։ Այս կեր-

պով բուն ամուսինը՝ այն՝ որ աւելի վերջ երևան կ'ելլէ — և որ կը կարգուի — ղէպ ի խորան կ'առաջնորդէ Նշանած մ'որու համար սէրը գոգցես գաղտնիք մը չունի ա՛ր . . . :

* * *

Այս բաները Ամերիկայէն կուգան մեզ Օտար գաղթակա-նութեանց պաղեցութեա՛մբ այս բարքերը եկած մտած են մեր մէջ։ Նոր աչխարհի մէջ ընդունուած սկզբունք մ'է թէ աղջիկ մը հրապուրիչ մը ձեռնարկներու դէմ իր անձը ի՛նք պիտի պաշտպանէ։ Իր երանութիւնը ձեռք ձգելու համար ճամբայ կ'ելլայ անվեհեր, առանց իր ծնողներու նպաստն ու պաշտպա-նութիւնը խնդրելու։ Այս այսպէս կ'ըլլայ չէ թէ միայն Ամերի-կայի մէջ՝ այլ նա՛և Անգլիոյ, Գերմանիոյ և Եւրոպայի շատ մը ուրիշ երկիրներու մէջ։ Բարեկամներէս մէկը՝ որ անցեալ տարի Տրեզտա բնակեցաւ երկար ամիսներ, կը պատմէր ինձ թէ դի՛ք հիւրասիրոցի (ղողղոքական յարգելի հոգիւ մը) աղջիկը խնդրած էր որ իր թևը մտած պտըտին քաղաքին մէջ, և թէ՝ ոչ ոք գայթակղած կամ զարմացած կ'երևար այդ նորատի զոյգին թև թևի գնելնէրէ անցնելը։ Բարեկամս կ'աւելցնէր թէ այս ընտանութիւնը ոչ սակաւ կը տագնապէր դինք, և թէ՝ անթարեկիրթ երևալու վախի և չնորհքով ըլլալու փափաքի մէջ-տեղ տատանած՝ չէր գիտեր ճշմարիտ թէ կնահաճոյութիւնը մին-չև ո՞ր պէտք էր հասցնել . . . :

Ի՞նչպէս եղաւ որ Ֆրանսայի մէջ այս սովորութեանց հետև-ելու հանեցինք բանը։ Ինչ մ'ազականութիւն, քիչ մ'ալ օտա-րոտի ձևերու հիացողութիւնը այս երևոյթը յառաջ բերին։ Ասկէ զատ պէ՛տք է խոստովանիլ թէ ինչ ինչ աչխարհի կիներ, ինչ ինչ մայրեր հին սկզբունքներու թուլացումը հեշտին գտան ու չհասուցին։ Հին առաններու ըմբռնուած կերպով խիստ ծանր ու փափուկ ղեր մ'էր մեր կատարածը։ Ասիկայ պէտք էր մի միայն իր աղջկան դաստիարակութեան նուիրել իր անձը, ու-շադիր հոգածութեամբ հսկել անոր վրայ և ֆիզիկապէս և բարոյապէս անարատ՝ յանձնել զան իր ամուսնոյն ձեռք։ Որ-քան հոգ, որքան արթնութիւն պէտք էր ասոր համար։ Ինչ խստութիւն կար յարաբերութեանց ընտրութեան մէջ։ Մայր մ'ամենայարգելի միջավայրեր միայն կը յաճախէր իր աղջկան հետ, և հաճելի ու զուարճալի գումարումներէ խոյս կուտար առ-ոչ՝ իր քաղցրիկ Ագնէսը կեղակարծ յարաբերութեանց մէջ չդնելու համար։

Նոր դրութեամբ մայր մ'ազատ կ'ըլլայ ամէն նեղութենէ։ Ուշած տեղը կ'երթայ իր աղջկան հետ՝ որ իր ընկերը եղած է հիմա։ Թէ մին և թէ՝ միւսը իր հաշուին կը զուարճանայ, թէ՝ մին և թէ՝ միւսը իր նախընտրեալ տարփածուն ունի՝ որու սի-րարանութիւնները կ'ընդունի քիչ շատ։ Ու կ'երևակայեմ թէ իրիկունը՝ կառքով տուն դարձած միջոցին իրենց սրտի գաղտ-

նիքները — տարօրինակ կերպիւ խիզախ գաղտնիքներ — մայր ու աղջիկ կը փոխանակեն իրարու։

Ցաւին այն է որ փոխանցութիւնը կը տարածուի ամէն օր։ Ընթացքի այս ազատութիւնը աղջիկներու գլուխը կը գարձնէ՝ որոնք այն վանքի մէջ՝ ուր վարժ և կրթութիւն կ'ստանան, կ'երազեն արդէն սիրաբանութեանց հեշտանքը և տենդագին իղձ կը տածեն իրենց մտակայ ապատագրութեան։ Օտարազգի կամ՝ աչխարհիկ կիներէ եաք՝ ահա մեր հարուստ քաղքենուհիք ալ միևնոյն ճամբուն մէջ կը մտնեն։ Քիչ առեն էն Ֆրանսա չպիտի ունենայ աղջիկներ, այլ նորահաս Ամերիկուհիներ։ Եւ Ֆրանսացիներն այս վտանգէ զգուշանալու միտքով Պ. Մարսել Բրէվո «Կէս – կոյսեր»ը նկարագրած է իր նոր գրքի մէջ։

Փութանք յայտարարել թէ այս Կէս – Կոյսերը բացառութիւններ են տակաւին։ Գաւառները՝ միշտ պահպանական՝ իրենց իմաստուն նախապաշարումներու յարած են միշտ։ Աղջիկները կը մեծնան հոն ինչպէս կը մեծնային հին ժամանակներ։ Նոյն իսկ Բարիզի մէջ կը ճանչնամ պարկեշտ ընտանիքներ՝ ուր կը չարունակեն բուրդը մանել, ըսել կ'ուզեմ անկլիական վէպեր կարդալ, անմեղ խաղերով զուարճանալ, Մօզարի սօնաթներ նուագել դաշնակի վրայ, անգիտել Իպսէնի տառերը և պարզօրէն հիանալ Պարիկ (La Dame blanche) նուագախաղի վրայ *։

ԱՏՕԼՓ ՊՐԻՍՕՆ

Մենք ևս փութա՛նք աւելցնել մեր կողմէ թէ այս յօդուածը՝ զոր իբրև ուշագրաւ և չահեկան՝ Annales politiquas et littéraires-ի ներկայ Ցունիս 17 ի թիւէն թարգմանել արժան գտանելինք, բարերաղդաբար ճչմիւ նկարագիրը չէ՝ մեր աղջիկներու՝ որք հեռի են տակաւին «կէս – կուսութեան» աննախանձելի պարագաներէ։ Այս ըսել չէ սակայն թէ օր մը չպիտի հասնին հոն, և այս օրն թերևս խիստ հեռու ալ չըլլայ։ Անոնց սպառնացող վտանգը չէ թէ վերը յիշուած ամերիկեան մասնաւոր դրութիւնն է՝ այլ այն բարուց զեղծումը՝ որ կը տիրէ այսօր և արշաւասոյր յառաջդիմութիւններ կ'ընէ Պալսոյ և Իզմիրի նման Հայ գլխաւոր կեդրոններու մէջ։ Ինչպէս երիտասարդք՝ նոյնպէս և «հարուստ ու անգործ» մանկամարդք լուսաւորութեան և քաղաքակրթութեան բարիքը վարել կը կարծեն՝ մտագիւր անձնատուր ըլլալով մոլութեանց և հաճոյից։ Կիներ՝ մայրեր՝ անմտութիւն և յետադիմութիւն կը համարին այսօր չգուարճանալ ամէն կարելի կերպով։ Վայելումը տիրական իրաւունք կը համարին իրենց համար։ Վատթար օրինակն իրենց աչաց առջև՝ մեր նորահաս աղջիկները՝ որոնց բարոյական մակարդակը բաւական իջած է արդէն, «կէս – կուսութեան» ջուրերը պիտի հասնին անվրէպ, տխուր և անխուսելի հետևութիւն հետզհետէ ընդհանրացող ապականութեան . . .

ՄԵՍՐՈՊ ՆՈՒՊԱՐԵԱՆ

* Հեղինակը է Պուալդիէօ Ֆրանսացի անուանի նուագահիւսը։

ՄԵՐ ԳԱՒԱՌԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Զարմանալի կեանք մ'ունի մեր Գաւառականն. կէս քուն կէս արթուն է, և երբ նիստ կազմէ, հազիւ կ'սթափի, հազիւ օրակարգին խնդիրներն քննելու և ուսումնասիրելու ծանրութիւնը կ'ստանձնէ։ Թերևս այդ պետքը չզգար ժողովը, քանի որ մէկ երկու անհրաժեշտ երեսփոխաններ աղքատային գործերու քաջահմուտ լինելու յատկութեամբ, իր պաշտօնը կը կատարեն, և կ'կատարեն այնպէս որ չէ թէ հասարակային օգուտ, այլ միայն շփոթութիւն և խառնակութիւն կ'ծագին թէ կրթական, թէ տընտեսական և թէ եկմտական գործերու մէջ։ Եւ ինչո՞ւ համար, վասն զի միայն անձնական կիրք կ'խօսին, կ'գործեն ու կ'դատեն, և երբ ուղղամտութիւն, անկեղծութիւն և ճշմարտութիւն կ'դատափետուին, երբ վերջապէս հասարակաց դրամական ու բարոյական շահերն անձնական նկատումներու կ'զոհուին, դժուար չէ երևակայել որ այդպիսի ընթացք մը լուկ անկարգութիւն, զզուանք ու ինաս կ'առթեն, և հասարակութիւնն մեծապէս կ'տուժէ։

Աւելորդ է անուանել արդէն չատերուն ծանօթ անհրաժեշտ և ինքնակոչ երեսփոխանները, որ այս անարժան ուղղութեամբ՝ քանի քանի տարիներէ ի վեր՝ կ'շարժին և ամեն տոհմային գործի, պաշտօնի մէջ գանուելու կ'սլրին կ'մրկին։ Այս անհրաժեշտներն շնորհիւն է որ ազգային վարժարաններն կործանման վիճակի հասած էին, որ ազգային արկղին պարտքն 5 հազարէն 9 հազարի բարձրացած է, որ Մեսրոպեան աղքատ տուներու յատկացած դրամներն երկու ազգականներ թուլուզ ուտամ սորվելու յղուած են, այս պատճառաւ է որ շատ բանիերուն և բարեսէր անձնաւորութիւններ ազգային գործերու շրջանէն քաշուած չեզրք դիրք մը բռնած են։ Իրաց այս յոռի վիճակն անտանելի դատելով՝ իրենց անձնուիրութեամբ և բարերարութեամբ անուանի ազգայիններ Ս Աստուածորդի հետ հերուն դարմանն մը մը խորհած և կերպով մը յաջողած էին հետու պահել ծանօթ պատուհասներն։ Այս տնօրինութիւնն աւելի ևս գրգռեց անոնց զայրոյթն ու ատելութիւնն որոց զգալին չունենն եղան գեր։ Աստուածորդին դէմ բամբասանքն ու իր պաշտօնավարութեան դէմ ամբաստանութիւններ։ Իսկ երբ Գաւառական Գ. Նստին մէջ անոր եպիսկոպոսութեան վկայագիրը տալու խնդիրը մէջ կ'բերուի՝ մեր պաշտօնամէներուն համբերութիւնը կ'հատի և անվայել ընդվզում կ'յարձակին ոչ միայն Ս Աստուածորդին այլ և մի քանի բարենպատակ երեսփոխաններու դէմ և կ'յուսան որ իրենց թափած լարշանաց շնորհիւ, ինչպես Առնադրութեանց մէջ արձանագրուած են, կարող պիտի լինին ժողովն համոզել վկայագիրը մերժելու։ Սակայն Գաւառական ժողովն չհամոզուիր և մեծամասնութեամբ հակառակը կ'որոշէ։ Այս որոշման առջև մեր անհրաժեշտներն ուժասիպ կ'մնան այլ չեն վհատիր։ Նոր առիթի մը կ'սպասեն որ վրէժ առնեն։ Այս առիթը կ'պատահի երբ Գաւառականին վերջին նստին (Յունիս 17) Քաղաքական ժողովին ձեռաք՝ Տնտեսական խորհուրդին 1894ի շրջանին համար չինուած ընտրացուցէ վրայ, Դիւղաքէ մը և ազգ. արկղի արդի վիճակին վրայ եկմտական ցոյց մը կը ներկայէն։

Սչն դիտողագրով ֆաղ. ժողովը ցոյց կուտայ փաստերով որ անցեալ Հոկտ. ամսուն՝ նախորդ Տնտեսական խորհրդին յօրինած և գաւառապահին կողմէ վաւերացած նշմարտոյցն անգործադրելի է, քանի որ երևակայական հաշիւներու վրայ հիմնուած է, իսկ ցուցակն՝ որու մէջ եղք ու մուտք դեմ առ դեմ կ'երևին, 500 ոսկւոյ չափ քայլ կ'ցուցնէ։ Այդ՝ պարտ է դիտնալ որ նախորդ Տնտեսականն, որու մէջ անհրաժեշտութիւն գլխաւոր դեր կ'խաղային, շինած էր այդ նպատակաւոր նշմարտոյցն, ինչպէս որ 1894ի շրջանին դպրոցական կարգադրութիւններն ալ ըրած էր Ուսումնական-խորհուրդն, թեև՝ իրանց երկամեայ պաշտօնի լրումէն՝ հրաժարման վիճակի մէջ էին*։ Այն ժամանակ՝ մի քանի երեսփոխաններ բողոք բարձրին յայտարարելով թէ՝ իրաւունք չունի հրաժարական Տնտեսական խորհուրդ մը իր յաջորդին պատկանող գործը կատարել, և ըստ՝ եթէ ունի այն պարագային մէջ պատասխանատուութիւն մը, այն էլ նոր ընտրել իր պաշտօնակատարութեան ատկէ-էէն, որ միշտ կ'ուշանար . . .** Բայց այդ օրինաւոր բողոքն անլսելի մնաց այն ատեն, և այժմ ահա ապօրինաւորութեան վատ արդիւնքը գաւառականին կ'ներկայանար յաջորդող վարչութեան ձեռօք՝ անմիջական դարման խնդրելով, քանի որ տագնապալից էր արկղին վիճակն և շէնադանոցի ու վարժարաններու մատակարարութեան համար դրամ կ'պակսէր։

Գաւառական ժողովին Ատենապետ՝ Մեծ. Եսայեան Ղուկաս եպ. եռեսփոխանաց նկատողութեան կ'ենթարկէ այդ դրամական ծանր խնդիրն, և ահա վրիժառութեան ժամն հասած լինելով՝ անհրաժեշտներն մին կ'ելնէ և՝ իբր կիսկերտնեան շէշտերով՝ կ'պաշտպանէ հին ելմտացոյցն իբրև իրաւորեալ, և դրամական այս անձուկ վիճակը կ'վերագրէ յոռի մատակարարութեան, որոց հաղինակներն են ֆաղ. ժողովն, Տնտեսական խորհուրդն, Գեր. Առաջնորդն, և այս միահամուռ ամբաստանութենէ ետք՝ իր խօսքը կ'կնքէ ըսելով որ դրամանը դիւրին է, եթէ միայն դիտնք, որ կատարեալ համոզութիւն ունի եղեր գործերուն, իր մի քանի համախոհներուն հետ փնդիլ մանանախմբի մ'անդամ ընտրուին։ Ժողովին մէջ երեսփոխան մը միայն դիտել կ'տայ՝ թէ խնդիրն ծանր կերպարան մը կ'առնու այդ ամբաստանութեամբ, թէ չարիք է քննութիւն բանալ արդէն հանգուցեալ համար, որ ֆաղ. ժողովը գաւառականին վատահութեան արժանի՞ է թէ ոչ, թէ զարմանք է որ մի քանի անձեր միշտ, իբրև առաջին կարգի էմպէէր, ընարելի կ'ներկային որպէս թէ ուրիշ հաշուագէտ մարդիկ չլինէին հասարակութեան մէջ, և պաշտօն կ'մուրան, թէ փնդիլ Մանախմբի մը կազմութեամբ անհրաժեշտ երեսփոխանին ամբաստանութեան, որ կ'ենթադրէ նաև դրամական խորամ, կերպով մը հատատութիւն տալ և վարչութեան արժանապատուութիւնը վիրաւորել է։

---

* Դիտելի է, որ անհրաժեշտներն անյաջողութեամբ թէ Տնտեսական և թէ Ուսումնական և թէ ուրիշ վարչային ճիւղերու մէջ պաշտօն վարելէ չէին ձանձրանար՝ անշուշտ ամեն պաշտօնական մարմինների բերը բերբերցնելու նպատակաւ։

** Հաւանական է որ ծանոթագիրն յոյս տեսնէ։

Բայց Գաւառ. ժողովը՝ թերևս ամբաստանիչ երեսփոխանին ճարտասանական ատիւնէն յափշտակուելով՝ կ'ընտրե երէք հոգիէ բաղկացեալ Մասնախումբ մը նոր ելմուտցոյց մը պատրաստելու պաշտօնավ Տնտեսականին աջակցութեամբ։ Մինչ կարծիք է ըսել որ դէպ ի այդ Մասնախումբին երկու ելմուտգէաններն, որ այսպէս փաւաւոր յաղթանակ մը կ'տանին։

Միայն այդ անօրինութեամբ չաւարտիր գործն։ Տնտես. խորհուրդն, ինչպէս նաև Վարչութեան Ատենապետ՝ Վ. Եմմանուէլ Սպարդալեան Սահմանադրական Էֆէնտին, որ ներկայ չէր Գաւառականին, վերջէն իմանալով անոր որոշումն որ ի պաշտօնէ դրուած էր Դիւանին կողմէ առ Քազ. ժողովը, համաձայնութեամբ նիստ կ'կազմեն յԱռաջնորդարան և բողոքելով այդ որոշման դէմ՝ իրրև անկանոն և ոչ-օրինական մի խաղ՝ որու Գաւառականն թերևս անգիտօրէն ձայնակից կ'պանուէր, կ'հրաժարին պաշտօնէ։

Վ. Սպարդալեան էֆ. ի հրաժարագիրը՝ որ պատճառաբանեալ է, կ'ըսուի, ուշադրութեան արժանի պաշտօնական գրուած մը լինելը կ'հաստատեն։ կ'ճնայ իմանալ, որ Քազ. ժողովը պիտի գործէ՞ նորակազմ Մասնախմբի հետ, նոր Տնտեսական խորհուրդ մը պիտի ընտրե, թէ ոչ դիտողագիր մը պիտի ուղղե առ Գաւառականն։

Վ.

ԼՐԱԲԵՐ

Համայն ՖՐԱՆՍԱ սուգի մէջ է։ Իր մեծ քաղաքացին կորսուց Պ. Ս. Քառնօ՝ Հանրապետութեան Նախագահն, այս գերագնիւ և ընտիր հոգին յանկարծ կ'վախճանի (առաջ 25 Ն. Տ.)ի Լիոն, ուր գացած էր Արուեստահանդէսն այցելելու։ Մինչդպրին առջեւ մը կերպարանը կ'առնու այս հարուածն՝ որու ներքև ոչ միայն Ֆրանսացիք այլ բոլոր ազգութիւնները խորին վշտով կը համակուին և զգալի նշաններով իրենց վիշտը կ'յայտարարեն։ Աշխարհի գրեթէ ամեն կողմէ ցաւակցական և համակրական նամակներ և հեռագրեր կ'ուղղարկուին առ կառավարութիւնն և առ սգալի Տիկին Քառնօ՝ ի Բարիզ, ուր կ'փոխադրուի Նախագահին մարմինն և աննման չքեղութեամբ կ'կատարուի յուղարկաւորութեան հանդէսն։ Իր հանգստեան վայրը կ'լինի Բանթէոն՝ մեծ մարդերու նուիրեալ այս տաճարը։ Սակայն Հանրապետութեան այս չորրորդ Նախագահին յիշատակը պիտի մնայ անջինջ ամեն Ֆրանսացի սրտի մէջ, որ գառնապէս կ'արիւնի իր Նախագահի տարաժամ մահուան վրայ։ Իրրև մարդ՝ ազնուութեան, վեհանձնութեան և ուղղամտութեան տիպար, իրրև կենցաղագէտ՝ օրինասիրութեան և հայրենասիրութեան անմնուազ, Ֆրանսայի օգտին, պատուոյն և զօրութեան նախանձախնդիր՝ բարձրացուց անոր անունն և բոլոր Տէրութեանց համարումն ու համակրութիւնը գրաւեց՝ իր պատմա-

կան անուան չուքն աւելցնելով։ Մօտալուտ էր իր պաշտօնին եօթնամեայ պայմանաժամին լրումն, քանի որ Նախագահ ընտրուած էր 1887 Դեկտ. 3ին, կնքելով պատասխաններ և օրինակելի կեանքն 57 տարեկան հասակին մէջ։ Նախագահական ընտրելիներ պակաս չէին։ Հ. Պրիսօն արմատական, Ֆ. Բէրիէ Հարիւրեր ազատական, Շամէլ–Լաքուր լեռ, սակայն Վ. Հիւժօ ողջմիտ՝ որ Մերակոյտի և Երեսփոխանական ժողովոյ միացմամբ 845 անդամէ կ'բաղկանար, 451 քուէով ընտրեց ի Վէրսայլ Ֆ. Բէրիէ որ՝ հին անուն մը կ'կրէ, խոհական, հանճարեղ անձ մ'է, և իր առաջին յայտագրէն կ'հրատարակէ Սահմանադրութեան և Հանրապետութեան հաստատութեամբ ծառայելու խոստմամբ։ Ըստ օրինի՝ թէև վարչապետ Պ. Տիւբիւ կ'հրաժարի, սակայն կ'վերահաստատուի իր պաշտօնին մէջ, և անտարակոյս նոր ընտիր Նախագահին իմաստութեամբ և աղէտալի կորսեան մը ծանր տագնապութեան ներքև Ֆրանսա գէթ ժամանակ մ'աւելի ղօն, աւելի հաշտարար ու փրկաւէտ քաղաքականութեամբ պիտի վարէ իր հանրային գործերը։ Մի քանի տա կալ խնդիրներ արդէն կարգադրութեան ճամբուն մէջ կ'մուխին։ Ռանկօի խնդիրն, որ այնքան տաքցած էր, ըստ երևոյթին՝ և լորտ Լոզպէրիի մի համակրական ճառին նայելով՝ առանց ծանր հետեւանաց պիտի անօրինուի Ֆրանսայի հետ, որ կ'պահանջէ չնչել պայմանագրին այն յօդուածներն որով Հասարակածային Ափրիկէի մի քանի մասեր Անգլիա Ռանկօի պետութեան վարձու տուած է, ինչպէս որ Գերմանիոյ պնդման վրայ կ'չնչուի այն յօդուածն որով Դանկանիքա և Ալպէրդ Էտուարտ լճերու միջև բաւական տեղ Անգլիա վարձու բռնած էր, թոյլ տուելով այժմ իրեն որ Բարեյուսոյ գաղթավայրն ուղղակի կապէ հեռագրական թելով վերին Նեղոսի քաղաքներուն հետ։ Խնդիր կայ նաև ալքօլի մենաշնորհ հաստատել, որով 40 միլիոն Ֆրանքի չափ կ'յուսացուի գանձուն, ինչպէս արդէն ծխախոտի, լուցկիի, վառօդի մենաշնորհն ունի կառավարութիւնն, սակայն այդ տնօրէնութեան դէմ բողոքներ պիտի ելնեն, առարկելով թէ դանձն մեծ բան չշահիր արդէն այդ մենաշնորհի դրութենէն։ Ոլիմպիական խաղեր կ'հաստատուին Ֆրանսա և այլ տէրութեանց մէջ՝ Հելլենական հին խաղերուն նման, իրրև միջազգային հիմնարկութիւն, որ չորս տարին մի անգամ պիտի տեղի ունենայ։ Բանտարկեալ ջրանցքի համար նոր ընկերութիւն մը կը կազմուի՝ 65 միլիոն Ֆրանք դրամագլուխ գոյացնելու պայմանաւ, բաժինն 100 Ֆր. լինելով՝ և հին ընկերութեան բաժնատէրերն գոյացնելու տրամադրութեամբ։ Խօսիոյ կառավարութիւնն ևս իր ելմտացոյցը բարւոքելու նպատակաւ մենաշնորհատութեան դրութեան կ'դիմէ, և արդէն ադն և ալքօլն ի հաշիւ գանձուն վճառելու որոշումն տալու տրամադիր՝ եկամտի, պետական արժէթղթի վրայ ևս տուրք պիտի դնէ։ Անգլիա կ'պատրաստուի մեծ պաշքարին, այս է ազգային ժողովին մօտալուտ

ընտրութեան և այս առթիւ՝ ճառախօսութիւններ անպակաս են։ Պ. Կլատստոն նոր ընտրելի ժողովին ժէջ չուզեր աթոռ ունենալ, մինչդեռ Լիոս քաղաքն գումարած ազատական ժողովոյն ժէջ ուր արդի կառավարութեան կուսակից երկու հազար պատուիրակ կային, կ՝որոշուի լորտերու ժողովին վէտօյ իրաւունքը չափաւորել, այսինքն՝ երեսփոխանական ժողովէն երկրորդ անգամ քուէարկած օրինագիծ մը թագուհոյն վաւերացման մատուցանել։ Այս որոշումը կ՝արուի Պ. Լապուչէրի առաջարկին հակառակ, որով կ՝պահանջէր լորտերու ժողովին քարձումն, լորտ Ռոզկերի խոհեմութիւն համարելով աւելի մեղմ ընթացք մը բռնել։ Անգլիական կառավարութիւնը մտադիր է դեսպան յղել ի Հռոմ Պապի մօտ՝ Իրլանտացի կաթոլիկներու սիրտը չհնելու նպատակաւ և պապական նուիրակ ընդունիլ՝ կրօնաման խնդիրներու մասին բանակցելու համար։ Անգլիա նոր զահաժառանգ մը կ՝ունենայ՝ Եօրքի դքսին որդի մը ծնելով։ ՌՈՒՍԻԱ ևս կրօնական թոյլ տուութեան նշաններ ցոյց կ՝տայ ի նպաստ իր վիճապետին՝ ինչպէս նաև դատական վերանորոգումը տարածելու, երդուեալ դատաւորներու դրութեամբ՝ որ մի չատ երբ պական ազդեցութենէ մէջ վաղուց ընդունուած է, երկրին այլ և այլ կողմերը հաստատելով։ Զարն Պօրքի կ՝ուզևորի՝ երկաթուղւոյ արկածին առթիւ՝ կառուցուած եկեղեցւոյն օծման ներկայ գտնուելու։ ԹՈՒՐՔԻՈՅ վեհ. Սուլթանին վեհապետներ և իշխաններ տակաւ կ՝այցելեն, որպէս զի իրենց մեծարանքն նորին վեհափառութեան արտայայտեն։ Այս օրերս Սերպիոյ Ալէքսանդր թագաւորն, ինչպէս նաև Եգիպտոսի խեդիվ Ե. Աբբաս Հիլմի փաշան կ՝պատրաստին իրենց հիւր մեր վեհ. Սուլթանին, որու վեհանձն ասպնջականութիւնն հանրածանօթ է։ Տ. Խորէն Պապ իարքի հրաժարականն Նորին վեհափառութենէ ընդունելով՝ հրաման տուած է խառն ժողովով տեղապահի ընտրութեան ձեռնարկել։ Հնտախտրն մի քանի գաւառական քաղաքներ դեռևս կ՝ճարակի, թէև թեթև կերպով, և յուսալի է որ ի չորս պաշտօնական հոգածութեան մօտերս ի սպառ դադրի։ Սակայն ժանտախտն մեծ կոտորած կ՝ընէ ի հարաւային Ջինաստան և գլխաւորապէս Հոնկ-Քոնկ կղզին, ուր օրն 100 հոգի կ՝մեռնին և նոյն կղզւոյն 300 հազար բնակիչներէն 100 հազարն արդէն խոյս տուած են։

ԽՄԲԱԳԻՐ-ՏՆՕՐԷՆ Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ՄԵՐ ՆՊԱՐԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Դ. եւ Լ. ԾԷՐԻՏՑԵԱՆ

Հայոց մեծ թաղ

Մեր վաճառատան մէջ կը գտնուի անոյշին ամէն տեսակ պարէն, ինչպէս՝ այիւր, բրինձ, արդար եղ, շաքար, խահուէ, մէթ, մաքարօնի, ապուրի համար խմորեղէններ, պանիր, պիսքուիներ, անուշեղէններ, գինի, քօնեակ, և այլն, և այլն և ամէն ինչ որոց պէտքը ղգալի է ամէն տան և մանաւանդ ամառուան խոհանոցի մէջ։

Խիստ ժամն և ամէն մրցում մերժուած գիներ։

ՀԱՅԿ ՋԱՆԻԿԵԱՆ

ՄԹԵՐԱՆՈՑ ՎԵՐՄԱԿՆԵՐՈՒ

Գլուխ – Իւխ, Ընկ– 4, 12 և 14

Կը ծախուին զանազան վերմակներ, անկողնի և բազմոցի համար թէ՛ բամպակէ և թէ՛ յարդէ բարձեր, գլխէրնէր և ուրիշներ։ Նաև Տեղւոյն և եգիպտական ամէն տեսակ բամպակ թէ՛ մաճ և թէ՛ փոքր քանակութեամբ։

Ապագարանքի մրոյ մեծ հոգածութեամբ կը պատրաստուին զարդարուն վերմակներ հարսնեկան անկողնի համար։

Գնաւառներէն եկած յանձնարարութիւնք փութով ու ճշտութեամբ կը կատարուին։

ՇԱՏ ՁԱՓԱՒՈՐ ԳԻՆԵՐ

ԱՐԱՆՑ ՀԱՄԱՐ ՕՏԵԱՄ ՏՆՆԵՐ

Ջանազան կաշիներէ, ինչպէս՝ տեվէ տեբէ, ընտրին, վէրնը, ըսոտրին, սափէ և ամառուան համար գունաւոր կաշիներ։

Ոտնամաններու գինը պիտի որոշուի հագնողին ոտքին թուչի համեմատ։ Ահա ՆՈՐՈՒԹԻՒՆ մը որմէ օգտուիլ կը խրատենք մեր պատ. Յաճախորդներուն և Աշխ. Հասարակութեան, որովհետև՝ այս դրութեամբ՝ 0/0 40-45 ՆՈՒԱԶ պիտի վճարուի։

ԳՆԵՑՈՒՑԱԿ

Թիւ– 40 ես Ֆր– 48 — Մեհրոբ 33 ես

Կօշիկ հաբուխ կրկնաներքան	Թիւրը	Ֆրշ	7
Կօշիկ Ռիւ– »	»	»	6
Պօթի խոճատար և խրոտած	»	»	3 25
Բօթին ու սուննկատար (մանթարլը) »	»		2 75
Գլուքեզ ու »	»	»	2 75
կէս պլուքեզ և կէս պօթ	»	»	2 50
Ա.քարքին	»	»	2 37 1/2
Բօթին տուբ	»	»	3 75

Միաներքան վերի ցուցակին գիներէն 1/4 մէճիտ պակաս։

Ոտնամանները ի Տարկին 24 ժամէ կը յանձնուին,

Ամենութիւն, գիմադրականութիւն և ճաշակաւոր ձեւաւորութիւն։

ՎԵՐՋԻՆ ԳԻՆ ԿԱՆԽԻԿ

Աչխ Եօրեղ Եկեղեցւոյն մեծ դրան մօտ, Ընկ– 47

ԱՄԱՍ ՊՕՂՈՍ Կ. ՕՀԱՆԵԱՆ

Պ· ՅՈՎՍԷՓԵԱՆ

ԳՈՐԾԱՏՈՒՆ

Հայոց Դէպ Ֆոքըջը, Բէյլիքէ Ճադդէն, Ըէ– 106

Սոյն տեղական գործատունս, որսորդաց վերաբերեալ կաշիէ, ձգախէժէ և թէ՛ լաթէ ամէն տեսակ պէտքերու լաւագոյնը շինելու պատիւն ունի· ամենաազնիւ որսորդ մը իր քմահաճոյքը համեմատ ո և է խնդրանքի մը անմիջական պատրաստութեամբը մեծ գիւրութիւն պիտի դանէ· Գաւառներէ ո և է խնդրանք կամ ցուցակ ամենայն ճշդութեամբ կը դրկուի· Մեր ձեռաց արտադրութիւնը ըլլալով ունինք նաև ճամփորդաց մեծ ու փոքր մտուկներ, կանանց, գլորոցականաց, փաստաբանաց, գրագրաց, բազմոցներ, ծխամորչերու զանազան պույտաակներ, դրամի և սիկարէթի դրամապանակներ, թղթապանակ, զանազան գօտիներ, կապերտ պույտաակներ, և այլն, և այլն·

Ցոյս մեծ ունիմ թէ, Ցարգելի Ազգայինս հայ գործատուն մը բաջալերելու ակնիւ զգացմամբ իրենց պիտանիին մեզմէ գոհացնելու պիտի բարեհաճին·

ՆՈՐ ԼՈՒՍԱՆԿԱՐԶԱՏՈՒՆ

ԳԱԲԼՕ ՊՈՒՉՄՒՃԵԱՆ

Ցբոնկոց Թաղ, Կէ–ըմհալլէ 7,

Սոյն գործատան մէջ մեծ խնամքը և գեղարուեստական յաջողակութեամբ կը շինուին ամէն տեսակ պատկերներ ոյլ և այլ մեծութեամբ, պատկերաց վերարտադրութիւնք և մեծցնուին կը ծախսին ամէն տեսակ լուսանկարչութեան վերաբերեալ մեքենաներ և այլ գործիքներ վերջին դրութեամբ կատարելագործուած·

Փափաքողաց մասնաւոր արուեստախօսութիւն·

ԴԻՒՐԱՄԱՏԶԵԼԻ ԳԻՆԵՐ

ՊՕՂՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Օսման Ջաթէ Խան, վերէ յարկ, 37, Բէյօղլուէքըլը Պաշէ

Պատիւ ունիմ ծանուցանել Պատ· Ցաճախորդներուս և Աբդոյ Հասարակութեան թէ կը պատրաստեմ բուն Անգլիական ոճովնէմ արանց համար ամէն տեսակ ճաշակաւոր հագուստներ Լօնտօն հրատարակուող «Տէը Ռ–ոյ–լ–Ցո կապէր» դերձակներու յատուկ պատկերազարդ հանդէսը կ'առանամ, որով միշտ օրը օրին տեղեակ կը լինիմ Անգլիական նորաձեւութեան·

վէսթօն	Քօրիսիա	ոէճթա	6
ֆաուէթ	»	»	7
Ռըսէլճլօթ	»	»	8

ՎԵՐՋԻՆ ԴԻՆ — ԿԱՆԽԻԿ



ՄԹՐՆՑ· ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՆԵՐՈՒ

Ն. Ժ. ԲԱՔԱՐԱՔԻ եւ ԸՆԿ·

Ցուց· Թուղ 91 — Հեռ·Թուղ 34

Գ·ռուխ, Քեռեր–Ալբը 32/34

Մարդ կրնայ ամէն տեսակ կարի մեքենաներու տէր լինել, ՄԻՄԻԱՅՆ չարաթական ½ մեծիա վճարելով ։

Կօշկակարներու, դերձակներու և ճերմակեղէնի կարու հիներու համար՝ կարի մեքենաներու նոր ֆաբրիք ամենէ տոկուն, ամենէ արագ, ամենէ դիւրին և առանց ձայնի է։

Մեր վաճառատանէն ծախուած ամէն մեքենայ ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ է։

Մեր ամէն յաճախորդներուն ՁՐի գաստատութիւնն և մեքենաներու նորոգութիւնն։

Ամէն տեսակ մեքենաներու նորոգութիւն։

Ասեղ, դերձան, իւղ չափաւոր գներով։

Հաճոյանալու համար ԱՆԴԱՄ ՄԸ ՄԻԱՅՆ այցելել պէտք է։

ՎՃԱՐՈՒՄՆԵՐՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԻՋՄԻՐի համար — Արժէքին կէսը կանխիկ և մնացեալ երեք ամիսէն։

ԻՋՄԻՐԼ ԴՈՒՐՍ — կանխիկ։

Ամէն անոնք որ վիճակաքին հաստատուն և ճաշակաւոր ու միանգամայն խիստ չափաւոր գիններով՝ կազմեալ գրքեր ունենալ կ'ուզեն, 1857ի իւնր հաստատեալ, Եվանկէլիքեան Ցուցնաց գլխոցին անցքին մէջ թիւ 8

առ **ԱՓԱՆԱՍ ԱՆԿԷԼԻՏԻՍ**

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԴԵՂԱՐԱՆ

ՁԱՐԵՀ ՇՆՈՐՀԱԻՈՐ

Հայոց Թուղ, Բեյնթէ ճաթրթ

Ամէն տեսակ դեղերու մեծ խնամքը պատրաստութիւն

Չափաւոր գիններ

Գաւառներէ եկած հիւանդներու ամէն դիւրութիւն կը տրուի, իրենց հիւանդութեանց տեսակին յարմար բժիշկներ կը ներկայացուին և անոնց պէտք եղած դեղերը մինչև իսկ գաւառները կը ղրկուին։

ԿԱՐԱՊԵՏ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷ

Շատ բարև Ազն. Տիկիններու և Նաշելի Օրիորդներու.

Եթէ կուզէք ձեր փափուկ մատներու տակ, դեղեցիկ, ձևաւոր, կոկիկ և աղուոր վերջին նորաձևութեանց համաձայն ԹՈՐՇՈՆի գործիք մ'ունենալ, որ ձեր պարապոյ ժամերուն փոքր ֆէյնէրով, գոյնզգոյն գնդասեղներով, ծովզոյն կամ վարդագոյն թղթի վրայ, ըէթէր, ըէթէր ներպ աշնակութեամբ, ձեր մատներու նրբին ճարտարութիւնն ցոյց տալ, պարտիք հատ մը առնել իմ չինած ԹՈՐՇՈՆի բարձերէն, զորս վերջին կատարելութեան հասուցած եմ, որու ասպնջոյն է՝ Ֆրանկաց թագը նշանաւոր վաճառատուներէ մէջ իմ չինածներուս ի վաճառ դրուիլն, և որու նմանը Իտալիոյ մէջ ոչ ոք կարող է չինել։

Ասկեց զատ՝

Մատադիր եմ 1900ի Յարիզի մէջ բացուելիք ամերիկեան ցուցահանդեսին հատ մը դրկել ի դնահատութիւն։

Փութացէք ուրեմն առնիլ Տիրուհիք, իմ չինած ԹՈՐՇՈՆի բարձերէն մէյմէկ հատ գնելու, որու շահիլն՝ ձեր ընտրութիւն՝ միայն ունիմ տուն մը չինել տալ։

Մէկ ԹՈՐՇՈՆի բարձ, 38 հատ ֆիլօ 30 ֆր., 1 ՃԱԽԱՐԱԿ, 40 ԳՆԴԱՍԵՂ և ԹՈՒՂԹ միասին՝ 1 Ուրդ. մէջիտ. Միայն ԹՈՐՇՈՆի բարձը 20 ղրչ. անցուկ։

Կնքբռնաթղթէ Հայոց Թաղ

ԿԱՐԱՊԵՏ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

Պատիւ ունիմ ծանուցանել քաղաքիս Պատ. Հասարակութեան թէ պատրաստ եմ ջրուիչի և հաւաքիչի պաշտօն կատարել, այսինքն ջրուել հրապարակիր, մանագոյ վիճակահանութեան տոմսեր և այլն և այլն և նոյններուն արժէքը հաւաքել։ Նմանապէս կարող եմ ինձ յանձնուած պաշտօն փոքր վաճառատուններու մէջ։ Պատ. Հասարակութիւնը կարող է երաշխաւորել իմ գործօն բնութիւնս և հաւատարմութիւնս ուղղակի Հայ Ընթերցասան Պատ. վաճխներէն։ Փութացէք հաճիլ դիմել ցերեկը Պարոնք - Գաբռ Պաբռճիաննի վաճառատան դիմացը կամ երեկոյին և գիշերը Հայ Ընթերցատուն՝ ուր տարիէ մի վեր գործակատարութեան պաշտօն կը վարեմ։

ՊԵՏՐՈՍ ՔԻՇՄԻՇԵԱՆ

Սպրք Երկիր, Նկարագրութիւն Ս. Երուսաղէմի և սրբազան տեղեաց· ՏՐԴԱՏ Ե· ՎԻՊՏ· ՊԱՒԼԵԱՆ· Տէր և հրատարակիչ Նշան Կ. Պէրպէրեան Կ. Պոլիս· Գին 15 ղրուշ·

Առաջնորդ ընթերցգութեան եւ բարգմանութեան· Երկրորդ տարի, միջին ընթացք· Աշխատասիրեց ՊԵՏՐՈՍ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ· Տպագր· Նշան Կ. Պէրպէրեան, Կ. Պոլիս· 1894· Գին· 2 ղրչ·

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Հիմեալ 1895ին Զմիւռնիա։

Սոյն դպրոցին մէջ տղոց կ'արուի, հաստատուն կրթութիւն օգտակար գիտութեանց վերաբերեալ։ Կ'ուսանդուին Գերմաներէն, Ֆրանսերէն և Անգլիերէն որ պարտաւորիչ են։

Դպրոցս կ'ընդունի նաև գիշերօթիկներ։

Դպրոցական տարին կ'սկսի 1/13 Սեպտեմբերին։

Աւելի ընդարձակ տեղեկութեանց համար պարտ է դիմել գերմաներէն դպրոցին տնօրէնին։

Պուճախլէ փողոց, թիւ 37

Է.Տ. ՄԼՑ ԷՐՄԴԷՑՆ

ԲԱՌԱՐԱՆ ԱՆԴՂԻԵՐԷՆԷ Ի ՀԱՑ յօրինեց Վ. Տ. ՅԱԿՈԲԵԱՆ, Ամբողջ գործը փոխանակ 35ի որ խոստացուած էր՝ 45-47 թերթ պիտի լինի։ Բաժանորդագինն է պարզ կազմ 30 դրշ. լաթ. 35, կիսակաշի 40։ Օտար երկրաց համար 7 և 8 ֆր. լրանալէ յետոյ 40, 45 և 50 փոստին ծախքը գնողին վրայ լինելով։ Փափաքողք պարտին դիմել հրատարակչին, Զ. Թորոսեանի Պօլիս, Պահճէ-Գաբու, նոր բոստին դէմ, թիւ 4, ուր է միակ կեդրոնատեղին։ Ա. Թերթն ձրի իբր նմուշ կը տրուի։ Հրատարակուած է 38րդ թերթն։ Բաժանորդագրութիւնն ի մէջ կը փակուի երբ 40րդ թերթը հրատարակուի։

ՑԻՇԱՏԱԿԱՑ ԾԱՂԻԿՆԵՐ. Փունջ առաջին. ՌՈՒԲԷՆ ՈՐԲԷՐԵԱՆ, կեդրոնատեղի Ցակոբ էֆ. Իպրանեան գրավաճառ և Ջրավաճառ կ. Պօլիս կէտիկ — Փաշայ, գին 5 դահեկան. գուսաններու յանձնարարութեանց փոխան նամակագրոշմ ևս կընդունուի։ Փունջ երկրորդ ընդ հուպ հրատարակելի։

Ա. Կ. ՍԷՓԻԼԷՄԵԱՆ. Մտրդ ըլլալու միջոցը կամ կեանքի մէջ յաջողելու ճամբան։ — կեդրոնատեղի Ց. Մատթէոսեան Թղթավաճառատուն, կ. Պօլիս. Գին ընտիր քառթօնէ կազմ 8 դրշ. սակեզոծ և փառաւոր լաթակազմ 12 1/2 դրուշ։

Լիւռն Տօլատոյի կրէյցէրեանց, Սօճառն Թարգմ. ԽՈՐԷՆ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ՍՏԵՓԱՆԷ. Տպագր. Գ. Պաղտատլեան կ. Պօլիս։ Գին 5 դրուշ։

Համառօտ գրացուցակ. Պ. Պալինց գրատուն. Ֆինճանճըլար եօքուշու թիւ 20 կ. Պօլիս. 1894.

Անոնք որ կ'փափաքին իրենց երկերն Թերթիս մէջ ծանուցուած տեսնել, կ'խնդրուին որ երկերկու օրինակ խմբագրութեանս հասցնեն։

ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՔ

Ը ՄԱՄՈՒԼԻՆ

Դահլեան տպ.

Ջատիկ (վօլթեր)			5
Ձիլտին (ոպոռաճ)			
Մինքրօ-Մենաս, Ժան և Ֆօլէն, Ճերմակ ու Սև (վօլթեր)			4
Վերթէր (կէօթէ)			8
Մենասեանի աղօրին (Տ. Պոմոն)			3
Սէվիլյի սափրիչը (Պոմարշէ)			3
Փաղանիք Խարիվլի (Լօժէն Վիւ) 8 հատոր			96 50
Հազար ու մէկ գիշերներ 6 »			74 50
Երիք Հրացանակիրք (Ա. Տիւմա) 3 »			36
Հսան տարի առք » » 4			46 50
Պրաժլօն դերկոմս » » 12			115
Անմոլ	» »		16 50
Իվանօէ (Վ. Սքօթ) 3 հատոր			29
Անիծեալն (*** Արբայ) 4 հատոր			58 25
Ամուրիի մը երազները (Իք. Մարմ[illegible])			6 50
Աչխարհի չրջանն ութսուն օրուան մէջ (Ժիւլ Վեռն)			12 75
Խորհրդաւոր կղզի (Ժ. Վերն) 3 հատոր			28
Մանկտիք (Շանփլէօրի)			9 25
Նիսերիականի մը Յիշատակը			8
Համառօտ պատմ. Ընական գիտութեան (Ա. Պըքլէյ)			10
Մանր վէպեր ու դասեր տղոց համար (ոպոռաճ)			
Բանալի հայերէն շարադրութեան Բ. տետր			5
Պիտեղիք ու պարտիք տղոց Ե. տետր			5
Ընդհանուր պատմութիւն համառօտ Մաս Ա.			5
» » » » Բ.			
» » » Հատոր Բ.			
Առաջին Ընթերցարան			2
Երկրորդ ընթերցարան Ե. տետր			2 50
Տունին դուրս թոպերախաղ			5
Իրաբանութիւն Բ. տետր			5
Առողջաբանութիւն աղջկանց համար			5
Արեւելեան Մամուլ 23 տարուան (1871–1893)			1242
Նարատի Երգո (Ոնէ)			5
Բերուզակ (Գորտէն)			3
Առանին Տնտեսութիւն			8